
Մարինե Հակոբյան

Ինչպե՞ս ստանալ
տեղեկատվություն
սոցիալական ներառման ճանապարհին

Ուղեցույց հաշմանդամություն
ունեցող անձանց համար

Երևան 2008




Հեղինակ՝
Մարինե Զակոբյան

Ծրագրի ղեկավար՝
Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ
Բ.Գ.Թ., դոցենտ **Շուշան Դոյրոյան**



Բովանդակություն

Ուղեցույցի նպատակը եւ խնդիրները	4
ԲԱԺԻՆ Ա. Սոցիալական ներառումը և տեղեկատվության ազատության իրավունքից օգտվելու անհրաժեշտությունը	5
Ա.1 Տեղեկատվության ազատությունը.....	7
Ա.2 Տեղեկություն հասկացությունը.....	9
Ա.3 Ո՞վ է տեղեկատվություն տնօրինող և տեղեկատվության համար պատասխանատու անձը.....	21
Ա.4 Ո՞ւր դիմել.....	22
Ա.5 Ի՞նչ տեղեկատվություն ստանալ.....	27
ԲԱԺԻՆ Բ. Մատչելի տեղեկատվություն «ՏԱ մասին» օրենքի և այլ հարակից օրենքների համաձայն	46
Բ.1 Ի՞նչպես դիմել և ի՞նչ ժամկետներում ստանալ տեղեկությունը.....	46
Բ.2 Վճարովի, թե՞ անվճար.....	51
Բ.3 Ո՞ր տեղեկությունն է սահմանափակ կամ գաղտնիք.....	52
Բ.4 Տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը և մերժման կարգը.....	53
ԲԱԺԻՆ Գ. Մատչելի տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանության իրավական երաշխիքները	56
Գ.1 Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ պարտադիր հրապարակման ենթակա սոցիալական տեղեկությունները.....	57
Գ.2 Մատչելի տեղեկատվություն.....	59
Գ.3 Ինչպե՞ս և ու՞մ բողոքարկել տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու դեպքում.....	61
Գ.4 Պատասխանատվությունը տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու կամ անձնական գաղտնիքը հրապարակելու դեպքերում.....	62
ԲԱԺԻՆ Դ. Հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության մատչելիության ապահովման միջազգային փորձը և ազգային հեռանկարները	65
Օգտագործված իրավական ակտերի ցանկը	67



Ուղեցույցի նպատակը եւ խնդիրները

Յաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվության ազատության իրավունքը ներկայացնելու, մատչելի իրազեկվածությանը նպաստելու և դրա միջոցով երկրում սոցիալական ներառման գործընթացը հաղթահարելու նպատակով է, որ նախաձեռնվել է այս ուղեցույցի կազմման աշխատանքները:

Ուղեցույցի օգնությամբ դուք հնարավորություն կունենաք ծանոթանալ մարդու իրավունքների կարևորագույն բաղադրիչներից մեկի՝ տեղեկատվության ազատության և հարակից ձեր իրավունքների հետ: Տեղեկատվության ազատության հիմնական սկզբունքները ենթադրում են, որ տեղեկատվությունը պետք է տրամադրվի բոլորին հավասարապես և, որ տրամադրվող տեղեկատվությունը պետք է լինի հնարավորինս ամբողջական, հավաստի, մատչելի և հասկանալի: Վերջինս կարևոր պայման է հատկապես այն անձանց համար, ովքեր առանց առանձնահատուկ պայմանների կամ խելամիտ հարմարությունների առկայության դժվարանում են ստանալ, օգտվել և հասկանալ անհրաժեշտ կամ իրենց ուղղված տեղեկատվությունը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության, ՄԱԿ-ի և ԵԽ Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագրի դրույթների՝ բոլոր մարդիկ իրավահավասար են: Մարդու իրավունքները և ազատությունները հանընդհանուր են, այսինքն՝ վերաբերում են բոլորին, անբաժանելի են, այսինքն՝ մարդուն վերապահված են նրա կյանքի ամբողջ ընթացքում, և փոխադարձ կախյալ են, այսինքն՝ լրացնում կամ շարունակում են մեկը մյուսին: Դա է պատճառը, որ ուղեցույցում ոչ միայն խոսվում է տեղեկատվության ազատության իրավունքի մասին, այլև՝ այն հարաբերությունների, որոնց տեղյակ լինելով՝ առավել հեշտ կլինի հասարակական կյանքում ձեր գործունեությունը:

Ուղեցույցը կօգնի ձեզ, ըստ տեղեկատվություն տնօրինողների, կողմնորոշվել, թե սոցիալական ապահովության և կյանքի պատշաճ մակարդակի, առողջության և վերականգնման, կրթության և աշխատանքային իրավահարաբերությունների, անձնական անձեռնմխելիության և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկությունների համար ո՞ր մարմնին, ինչպե՞ս և ի՞նչ պայմաններով դիմել և ստանալ, ո՞ր տեղեկատվության տրամադրումն է համարվում սահմանափակ կամ գաղտնի, և ի՞նչ պատասխանատվություն է սահմանված տեղեկատվությունը չտրամադրելու դեպքում:

ԲԱԺԻՆ Ա

Սոցիալական ներառումը և տեղեկատվության ազատության իրավունքից օգտվելու անհրաժեշտությունը

Սոցիալական ներառումը ենթադրում է հաշմանդամություն ունեցող անձի հավասար ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին:

Տեղեկատվության ազատության իրավունքը ձեզ համար ունի երկակի նշանակություն. նախ՝ դուք բոլորին հավասար իրավունք ունեք փնտրել և ստանալ ցանկացած տեղեկատվություն, երկրորդ՝ ստացված տեղեկատվությունը կարող է մատչելի չլինել. հետևաբար դուք պետք է նաև հնարավորություն ունենաք ստացված, տրամադրված կամ ձեռք բերված տեղեկությունն ընկալել, տիրապետել և օգտագործել: Այսինքն, եթե նույնիսկ դուք ստացել եք այն տեղեկությունը, որը ձեզ անհրաժեշտ է, կամ պետական մարմինները հրապարակել կամ ձեզ են հասցեագրել որոշակի տեղեկատվություն, դա բավարար պայման համարել չի կարելի, եթե միաժամանակ ձեզ համար չի ապահովվել դրա մատչելիությունը:

Տեղեկատվություն տնօրինողները պետք է հոգ տանեն, որ տեղեկությունը ձեզ հասցվի ձեզ հասանելի ձևով, քանի որ հաշմանդամություն ունեցող անձը կայուն ֆիզիկական, հոգեկան, մտավոր կամ զգայական այլ խեղման(ների) հետևանքով դժվարանում է կամ լիարժեքորեն չի կարողանում ամբողջությամբ կամ արդյունավետությամբ մասնակցել հասարակական կյանքին՝ մյուս անդամներին հավասար, առանց խելամիտ հարմարությունների կամ համապատասխան առանձնահատուկ պայմանների առկայության, ինչպիսին է նաև տեղեկատվության մատչելիությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց կենսագործունեությանը նպաստող պայմանների և հարմարությունների առկայությունը, որը տրամադրվում է հինք ընդունելով հաշմանդամության ընդհանուր և անհատական առանձնահատկությունները, համարվում է խելամիտ հարմարությունների տրամադրում: Իսկ եթե ձեր կրթության և ուսուցման, աշխատանքի, հաղորդակցման, մշակութային գործունեության

և այլ մասնակցության ձևերի ապահովման ու դրանց կազմակերպման համար անհրաժեշտ են հատուկ ծրագրեր և մատչելիությունն ապահովող մեթոդներ, անհատական տեխնիկական միջոցներ, տեղեկատվության մատչելիության և ընկալման միջոցներ, կենսագործունեության միջավայր, ինչպես նաև մասնագիտական, սոցիալական և այլ ծառայություններ, առանց որոնց ձեր կողմից կրթական ծրագրերի յուրացումը, աշխատանքային, մասնագիտական և այլ գործունեության իրականացումը դժվար է կամ անհնարին, համարվում է առանձնահատուկ պայմանների տրամադրում:

Գործնականում հանդիպող հավանական խնդիրները հաշվի առնելով է, որ տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձի վրա դրված է տեղեկատվության մատչելի և հիմնավոր տրամադրման պարտականությունը (*այս մասին առավել մանրամասն տես ուղեցույցի 1.3-րդ կետը*) :

Ձեզ համար տեղեկատվության տրամադրման և հասանելիության մատչելիությունն ապահովող միջոցներ կարող են համարվել, օրինակ՝

- շարժունների լեզուն կամ սուրդո թարգմանությունը,
- ձեր օգնականը կամ ուղեկցողը,
- համակարգչային հատուկ ծրագրերը (օրինակ՝ «Արև» ծրագիրը),
- ձայնալարերի կամ լսողության ուժեղացուցիչ միջոցները կամ այլ տեխնիկական փոխարինիչ սարքերը և այլն:

Եթե ձեզ հետաքրքրող կամ ձեզ ուղղված տեղեկատվությունը տրամադրվի ձեզ համար մատչելի համարվող ներքոնշյալ միջոցներով, ապա դրանք կարող են հիմք հանդիսանալ գիտակցված և ինքնուրույն որոշումներ կայացնելու, ինչպես նաև կյանքի իրադարձություններին ինքնուրույն մասնակցություն ունենալու, անշուշտ, նաև ձեր լիարժեքության զգացողությունը ամրապնդելու համար:

Ա.1 Տեղեկատվության ազատություն

Տեղեկատվության ազատությունը տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու և դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու ձեր իրավունքի իրականացումն է¹: Միջազգային իրավական նորմերում և ՀՀ Սահմանադրությամբ այդ սկզբունքն արտահայտված է առավել ընդգրկուն բնորոշմամբ և կոչվում է «արտահայտվելու ազատություն»:

Տեղեկություն ստանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է: Այն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածում, որի համաձայն՝



«Յուրաքանչյուր որ ունի համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք, այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը և ցանկացած միջոցներով ու անկախ պետական սահմաններից տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր որ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:



Յուրաքանչյուր որ ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Ձեզ համար տեղեկատվության մատչելիությունն ու ազատությունը ապահովվում է նախևառաջ «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքում ամրագրված հրապարակայնության և մատչելիության սկզբունքով, համաձայն որի պետությունը պետք է ապահովի ձեր տեղեկություններ ստանալու ազատությունը:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ տեղեկատվության ազատության հիմնական սկզբունքը հրապարակայնության և տեղեկատվության տրամադրման մատչելիության ապահովումն է:

1. Տես՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենք, հոդ. 3:

Յիշեք՝

պաշտոնական փաստաթղթերը հասարակական բնույթ ունեն և պետք է մատչելի լինեն հանրությանը, եթե միայն չկա առավել կարևոր հանրային կամ պետական շահ տեղեկությունը չիրապարակելու համար: Անգամ եթե դուք դիմեք գաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու համար, իշխանությունները պետք է նժարի վրա դնեն մի կողմից հասարակության հետաքրքրությունը, տեղյակ լինելու իրավունքը, մյուս կողմից՝ գաղտնիքը պահպանելու անհրաժեշտությունը:

Սակայն վերոնշյալ հանգամանքին փորձենք անդրադառնալ նաև այլ տեսանկյունից. օրինակ՝ երբ տեղեկությունը կարող է վերաբերել ձեզ կամ ձեր անձնական տվյալներին: Համաձայն օրենսդրության՝ անձնական կյանքին վերաբերող տեղեկությունները գաղտնիք են: Սակայն եթե հաշմանդամության հարցերով զբաղվող որևէ կազմակերպություն կամ շահագրգիռ այլ կառույց դիմի պետական մարմնին՝ ձեր շահերից բխող միջոցառում իրականացնելու կամ ձեր շահերը պաշտպանելու նպատակով ձեր առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություն ստանալու հարցումով, ապա այդ տեղեկությունը կարող է տրամադրվել նույնիսկ առանց ձեր համաձայնության: Կամ, եթե դուք տառապում եք այնպիսի հիվանդությամբ, որը հասարակության համար վտանգավոր է, իսկ դուք չեք ձեռնարկում կամ ի վիճակի չեք ձեռնարկել բավարար միջոցներ հավանական վտանգը կանխելու համար, ապա այս դեպքում նույնպես անձնական կյանքի գաղտնիությունը կարող է խախտվել՝ ելնելով հանրային շահի գերադրությունից:

Դուք գիտեք, որ 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ լիարժեք իրավունակ անձ է, եթե դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ: Հետևաբար, դուք նույնպես, անկախ ձեր հաշմանդամությունից, իրավունք ունեք ինքնուրույն կայացնել ձեզ վերաբերող կամ ձեր շահերից բխող ցանկացած որոշում, կամ հնարավոր տարբերակներից կատարել ընտրություն:

Այստեղ միակ խնդիրը կոնկրետ որոշվելիք հարցի մասին ձեր բավարար իրազեկվածության հարցն է, որի հիման վրա դուք պետք է կարողանաք ճիշտ կողմնորոշվել և գիտակցված ու հիմնավոր գործողությունների գնալ: Ցավոք, թե՛ իրավական դաշտում, և թե՛ պրակտի-

կայուն դեռևս չեն ապահովված այն արդյունավետ միջոցները և եղանակները, որոնք հնարավորություն կտան ձեզ լինել լիարժեք անկախ և ինքնուրույն:

Դեռևս բավարար կարգավորված չէ անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված, ինչպես նաև հաշմանդամության հետ կապված դժվարություններ ունեցող այն անձանց շահերի պաշտպանվածության հարցը, ովքեր ինքնուրույն կամ լիարժեքորեն չեն կարողանում իրականացնել իրենց իրավունակությունը: ՀՀ օրենսդրությունը մի դեպքում սահմանում է խնամակալության կամ հոգաբարձության միջոցով հոգաժողովի հնարավորությունները, մյուս դեպքում՝ նախատեսում օգնականների աջակցությունը, սակայն դրանցում բավարար չեն վստահության և հուսալիության երաշխիքները:

Ա.2 Տեղեկություն հասկացությունը

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը տեղեկություն հասկացության բավականին ընդգրկուն շրջանակ է ուրվագծում: Ըստ օրենքի 3-րդ հոդվածի՝ տեղեկություն է համարվում անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալները՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ):

Կարևոր է, որ օրենքը տեղեկություն է դիտում ոչ միայն ավանդական կրիչի վրա առկա տվյալները, այլև չի դնում կրիչի որևէ սահմանափակում՝ էլեկտրոնային, թե ֆիզիկական: Տեղեկությունը կարող է լինել տեքստային կամ էլեկտրոնային փաստաթղթի, ձայնագրության, տեսագրության կամ լուսաժապավենի, գծագրերի, սխեմաների, նոտաների կամ քարտեզների տեսքով: Այն կարող է ամրագրված լինել փաստաթղթի, ժապավենի (տեսա-ձայնային), պնակիտի (դիսկետի), խտասալիկի (CD) ու այլ նյութական և էլեկտրոնային կրիչների վրա:



Այսպիսով, անձն ունի տեղեկություն ստանալու իրավունք՝ անկախ տեղեկատվության տնօրինման ձևից և նյութական կրիչից:

Հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակ ստանալու գործընթացները

Բժշկասոցիալական փորձաքննության

Քաղաքացիների բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության» տարածքային մարմինները: Հանրապետությունում գործում է բժշկասոցիալական փորձաքննական (*այսուհետ՝ ԲՍՓ*) 25 հանձնաժողով (22 տարածքային և 3 մասնագիտացված՝ ակնաբանական, հոգեբուժական և մանկաբուժական):

ԲՍՓ-ների ստեղծման նպատակն է կենսագործունեության սահմանփակում ունեցող կամ հաշմանդամություն ունեցող անձի՝

- ա)** կենսագործունեության սահմանափակման աստիճանը որոշելը,
- բ)** հաշմանդամություն ունեցող անձի կամ «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակը ճանաչելը կամ չճանաչելը,
- գ)** հաշմանդամության խումբ սահմանելը,
- դ)** հաշմանդամության ժանկետ սահմանելը,
- ե)** հաշմանդամության պատճառական կապը բացահայտելը,
- զ)** մահվան պատճառական կապը բացահայտելը,
- է)** մասնագիտական աշխատունակության կորստի աստիճան որոշելը,
- ը)** հաշմանդամի անհատական վերականգնողական ծրագիր մշակելը և հաստատելը,
- թ)** ժամանակավոր անաշխատունակության թերթիկի երկարացման թույլտվություն տալը:

Եթե ձեր հիվանդության, վնասվածքի կամ խեղման հետևանքով ձեր օրգանիզմում առկա է ֆունկցիաների կայուն կամ տևական խանգարում, ապա համապատասխան բուժում կամ սպասարկում իրականացրած բժշկական կազմակերպությունն անհրաժեշտ ախտորոշիչ, բուժական և վերականգնողական միջոցառումների իրականացու-

մից հետո (իսկ տևական բուժում պահանջող հիվանդությունների ժամանակ՝ նաև բուժման ընթացքում) ձեզ ուղեգրում է բժշկասոցիալական փորձաքննության:

Առողջապահական կազմակերպության ուղեգրում նշվում է ձեր ախտորոշումը, կիրառված բուժական վերականգնողական միջոցառումների արդյունքները՝ մանրամասն ներկայացնելով բոլոր օրգան-համակարգերի վերաբերյալ տվյալները (օբյեկտիվ, գործիքային և լաբորատոր)՝ նշելով ֆունկցիայի խանգարման աստիճանը:

Բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնում է ձեր հաշվառման կամ փաստացի բնակության վայրն սպասարկող հանձնաժողովը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ գործակալության պետի հանձնարարությամբ այլ հանձնաժողովը:

Յիշեք՝

ձեզ ուղղված ցանկացած ծրագիր կամ գործողություն կարող է կատարվել միայն ձեր համաձայնությամբ և ընտրությամբ: Չետևաբար՝ առողջապահական կազմակերպության ուղեգիրը բավարար պայման չէ՝ ձեզ բժշկասոցիալական փորձաքննության ենթարկելու համար: Դրա համար դուք կամ ձեր օրինական ներկայացուցիչը գրավոր պետք է դիմեք ԲՄՓ հանձնաժողովի նախագահին՝ ներկայացնելով նաև ձեր անձնագիրը և նշված ուղեգիրը:

- Եթե ձեր փոխարեն դիմել է ձեր օրինական ներկայացուցիչը, ապա վերջինս պետք է ներկայացնի նաև իր անձնագիրը: Իսկ եթե դեռևս չի լրացել ձեր 16 տարին, ապա ներկայացվում է ծննդյան վկայականը, ծնողներից մեկի կամ խնամակալի (հոգաբարձուի) անձնագիրը:
- Եթե դուք նույնիսկ չունեք հաշվառում, միևնույն է, դուք կարող եք ենթարկվել բժշկասոցիալական փորձաքննության՝ ներկայացնելով տեղեկանք փաստացի բնակության վայրից:
- Եթե դուք օտարերկրյա պետության քաղաքացի եք, ապա կարող եք անցնել բժշկասոցիալական փորձաքննություն, եթե տվյալ պետության հետ Չայաստանի Հանրապետությունն ունի համապատասխան միջպետական պայմանագիր:

Յիշեք՝

ձեր կամ ձեր օրինական ներկայացուցչի պահանջով փորձաքննություն իրականացնող մարմինը պարտավոր է ձեզ ծանոթացնել ԲՄՓ իրականացման կարգին:

Եթե ձեր առողջական վիճակից ելնելով դուք չեք կարող ներկայանալ փորձաքննության անցկացման վայր և դրա մասին նշել եք ԲՄՓ-ին ուղղված դիմումում, ապա հանձնաժողովը բժշկասոցիալական փորձաքննությունը կարող է իրականացնել ձեր գտնվելու վայրում (բնակության վայր կամ հիվանդանոց):

- **Հանձնաժողովի նախագահը, ուսումնասիրելով ներկայացված դիմումն ու համապատասխան փաստաթղթերը և հավաստիանալով փաստաթղթերի լիարժեքության մեջ, հարուցում է վարչական վարույթ՝** ձեզ կամ ձեր ներկայացուցչին պատշաճ ձևով ծանուցելով փորձաքննության օրվա, վայրի և ժամի մասին: Հանձնաժողովի նախագահը նշանակված փորձաքննության օրը ներկայացված փաստաթղթերը փախանցում է հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովը գնում է ձեզ (բացառությամբ հեռակա փորձաքննության դեպքերի), ձևակերպում փորձաքննական ախտորոշումը, գնահատում ձեր կենսագործունեության սահմանափակման աստիճանը, քննարկում ստացված արդյունքները և դրանց հիման վրա ընդունում որոշում:
- **Հանձնաժողովի նախագահը ձեր կամ ձեր ներկայացուցչի ներկայությամբ իրապարակում է հանձնաժողովի որոշումը՝**
 - հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու կամ,
 - ձեզ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու մասին դիմումը մերժելու (որոշումը եռօրյա ժամկետում հանձնվում է նաև ձեզ) կամ,
 - միայն անձի մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանը (տոկոսներով) որոշելու վերաբերյալ (որոշման մասին տեղեկանքը եռօրյա ժամկետում հանձնում է ձեզ, իսկ անհատական վերականգնողական ծրագիրը 10-օրյա ժամկետում ուղարկվում է համապատասխան սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն):



Հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու դեպքում հանձնաժողովի կողմից նույն օրը կազմվում է անհատական վերականգնողական ծրագիր և պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնողական տեխնիկական միջոցների, այլ օժանդակ պարագաների անհրաժեշտության մասին տեղեկանք, որոնք հաստատում է հանձնաժողովի նախագահը և վավերացնում կնիքով, որոնք փորձաքննական որոշման մասին տեղեկանքի հետ միասին հանձնվում են ձեզ:

Եթե դեռևս չի լրացել ձեր 18 տարին, և ԲՄՓ-ի կողմից ճանաչվել եք հաշմանդամություն ունեցող, ապա ձեզ տրվում է «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակը: Իսկ եթե ձեր տարիքը 18 և ավելին է, ապա ձեզ տրվում է հաշմանդամության 1-ին, 2-րդ կամ 3-րդ խումբ: Եթե լրացել է ձեր տարիքային կենսաթոշակի իրավունք ստիճակը, կամ ձեր կենսագործունեության սահմանափակումը ԲՄՓ-ի կողմից ճանաչվել է վերականգնման ոչ ենթակա, ապա ձեր հաշմանդամության խումբը սահմանվում է անժամկետ կամ ցմահ:

Փորձաքննական որոշման քաղվածքը մեկշաբաթյա ժամկետում ուղարկվում է ձեր հաշվառման կամ փաստացի բնակության վայրն սպասարկող կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմին:

Հիշեք՝

անկախ այն հանգամանքից, թե երբ է ԲՄՓ-ն կայացրել որոշում կամ այդ մասին գրավոր տեղեկացրել ձեզ, կենսաթոշակային մարմնին կամ այլ իրավասու մարմնին, հաշմանդամության սահմանման սկիզբ է համարվում ձեր գրավոր դիմումի ԲՄՓ-ում մուտքագրմանը օրը, իսկ դուք համարվում եք հաշմանդամ՝ մինչև ԲՄՓ որոշման մեջ նշված ժամկետին հաջորդող ամսվա 1-ը:

Համաձայն ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության (ԲՄՓ) գործակալության կանոնադրության 3-րդ բաժնի 8-րդ կետի «ը» ենթակետի՝ գործակալությունը «խորհրդատվություն և եզրակացություն է տալիս առողջապահական կազմակերպություններին, զբաղվածության և սոցիալական ծառայությունների տարածքային

կենտրոններին՝ հաշմանդամին բուժվերականգնողական, մասնագիտական կողմնորոշման, որոշակի աշխատանքի ցուցված կամ հակացուցված լինելու, ուսման, վերաորակավորման, տնային սպասարկման անհրաժեշտության և այլ հարցերի վերաբերյալ»:



Ուշադրություն.

ԲՍՓ-ների եզրակացություններն ունեն խորհրդատվական բնույթ, որի միջոցով ձեզ տրամադրվում է հիմնավոր տեղեկատվություն ձեր առողջական վիճակի, դրա զարգացումների, բարդացումների և հնարավոր հետևանքների մասին:

Դրանից ելնելով դուք կկարողանաք կատարել գիտակցված ընտրություն՝ կրթության ձևի, մասնագիտության, աշխատանքի, առողջապահական կամ սոցիալական ծառայություններից, սոցիալական աջակցության կամ այլ ծրագրերի շրջանակում առաջարկվող միջոցառումների նպատակահարմարության վերաբերյալ:



Կողմնորոշման հարցում ԲՍՓ-ի եզրակացությունը ոչ մի կերպ պարտադիր կամ որոշիչ լինել չի կարող:

Սակայն դեռևս հանդիպում են դեպքեր, երբ պետական կառույցները փորձում են, ելնելով անհատական վերականգնողական ծրագրի «ձեր շահերից», ձեր փոխարեն կայացնել որոշում:

Ներկայացնենք մեկ օրինակ, երբ ձեր իրազեկվածությունը կարող օգնել ձեզ լինել ձեր իրավունքի տերը և թույլ չտալ սահմանափակել այն կամ ձեր փոխարեն կայացնել որոշում:

Համաձայն «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2007թ.-ի առկա ուսուցման ընդունելության կանոնների» 30-րդ կետի՝ «Վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում, սահմանված կարգով, Հանրապետական ընդունող հանձնաժողովի որոշմամբ ընդունվում են 1-ին ու 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամները, որոնց համար բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից տրված եզրակացության համաձայն, տվյալ մասնագիտությամբ սովորելը և հետագայում աշխատելը «հակացուցված չէ»: Այսինքն, այս կամ այն հաշմանդամությունը կրող անձը չի կարող դառնալ դիմորդ, իսկ հետագայում նաև մասնագետ:

Փաստորեն, դիմորդին ոչ թե խորհրուրդ է տրվում, այլ ԲՍՓ-ի կողմից կայացված «եզրակացության» հիման վրա Հանրապետական ընդունող

նող հանձնաժողովը սահմանափակում է նրա կրթության ձևի և մասնագիտական աշխատանքի ընտրության իրավունքը: Դա կուպիտ խախտում է, քանի որ հակասում է «Մարդու հիմնարար իրավունքների մասին», «Կրթության խտրականության դեմ», և «Հաշմանդամների իրավունքների պաշտպանության» ՄԱԿ-ի կոնվենցիաներին:

Ի դեպ, դուք իրավունք ունեք ԲՄՓ-ի փորձաքննական որոշումները, գործողությունները կամ անգործությունը վարչական կամ դատական կարգով բողոքարկել:

Հաշմանդամություն ունեցող անձանց պետական աջակցության երաշխիքները

Պետությունն իր քաղաքականությամբ սահմանել է ձեզ ուղղված մի շարք պետական աջակցության ձևերի: Դրանք հրապարակային են և ամրագրված են օրենսդրոթեմ:

Օժանդակող միջոցների տրամադրում.

2008թ.-ի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվելու է.

- աչքի պրոթեզավորման և ձայնալարերը հեռացված հաշմանդամություն ունեցող անձանց ձայնաստեղծ սարքերով ապահովելու ծրագրեր,
- տեսողությունից հաշմանդամ անձանց «Արև» համակարգով ուսուցանում, որի նպատակն է կազմակերպել անվճար համակարգչային ուսուցում և ապահովել հատուկ համակարգիչներով:

Քուժօգնության և բուժապասարկման տրամադրումը

Ձեզ ուղղված քուժօգնությունը և բուժապասարկումն իրականացվում է պետական պատվերի շրջանակներում, 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք ստանում են անվճար դեղորայք, իսկ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք՝ դեղորայքի արժեքի 50% զեղչով:

Ձեր անհատական վերականգնողական ծրագրի և ձեր կարիքի հիման վրա դուք կարող եք անվճար ստանալ նաև պրոթեզաօրթոպեդիկ օգնություն և վերականգնողական պարագաներ:

● Անվճար բուժօգնության ուղեգրեր

Անվճար բուժօգնությունը հաշմանդամություն ունեցող անձին ուղղված պետական աջակցության ձևերից մեկն է: Սակայն, համաձայն հարցումների, հարցվողների միայն 25%-ն է տեղյակ, որ ՀՀ կառավարության կողմից սահմանված կամ ձեր անհատական վերականգնողական ծրագրով նախատեսված հատուկ դեպքերում կարող է դիմել անվճար բուժօգնության ուղեգիր ստանալու, եթե անգամ համապատասխան չափանիշներով չի հանդիսանում անվճար բուժօգնության ծրագրի շահառու:

Երթևեկության արտոնյալ պայմանների տրամադրում.

Եթե դուք ունեք 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն, ապա ձեզ համար սահմանված է տրանսպորտային սպասարկման արտոնություն, մասնավորապես՝ քաղաքային էլեկտրատրանսպորտից կարող եք օգտվել անվճար:

Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամները, ինչպես նաև զինծառայության ընթացքում հաշմանդամ դարձած անձինք որոշ արտոնությունների դիմաց (օրինակ՝ գազի, ջրի, էլեկտրաէներգիայի և այլ զեղչված վարձավճարների), 2004թ. հունվարի 1-ից ստանում են ամենամսյա դրամական օգնություն, որոնց չափերը տարեց տարի բարձրացվում են: Օրինակ՝ Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին 2007թ.-ին տրամադրվող ամենամսյա դրամական օգնության չափը կազմել է 5700 դրամ, իսկ զինծառայության ընթացքում հաշմանդամ դարձած անձանց համար՝ 7500 դրամ: Միաժամանակ, պահպանվել են նաև որոշ արտոնություններ՝ կոմունալ ծառայությունների դիմաց (աղբահանություն, ռադիո, հեռախոս) 50% զեղչով վճարելու, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամների՝ ԱՊՀ երկրների տարածքում արտոնյալ պայմաններով երթևեկության իրավունքը:

Համաձայն «Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամների և մասնակիցների, ինչպես նաև նրանց հավասարեցված անձանց համար արտոնյալ երթևեկության իրավունքների փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրի՝ մասնակից պետությունների տարածքներով, տարին մեկ անգամ (դեպի և ետ) երկաթուղով կամ գետային նավատորմի տարանցիկ և տեղական ուղիների նավերով անվճար երթևեկության իրավունք և օդային, ջրային կամ միջքաղաքային ավտոմոբիլային տրանսպորտով՝ 50% զեղչով: Իսկ առանձին

կարգավիճակով անձանց համար սահմանված է տարին մեկ անգամ, նշված միջոցներով, անվճար երթևեկության իրավունք:

Սոցիալական աջակցության ձևերի տրամադրում

Սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի թափանցիկությունը և հասանելիությունը սոցիալական աջակցության կազմակերպման և տրամադրման հիմնական սկզբունքներից է²:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ համայնքները կամավորության հիման վրա, որպես ծառայության տարբերակ, ստեղծում են խորհրդատվական և աջակցության խմբեր՝ պարտադիր կերպով դրանցում ապահովելով հաշմանդամների ներգրավվածությունը: Սոցիալական աջակցության նպատակն է բավարարել նաև ձեր հիմնական պահանջունքները, ստեղծել պայմաններ հասարակության մեջ ինտեգրվելու համար, խթանել ինքնօգնության և ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ձեր ունակությունների զարգացումը, կանխարգելել սոցիալական մեկուսացումը: Այդ նպատակով է, որ սոցիալական ծառայությունը կարող է լինել նաև խորհրդատվական և իրավաբանական օգնության տրամադրումը, որն իրականացվում է անվճար հիմունքներով: «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 16-րդ, 18-րդ, 20-րդ, 21-րդ և 28-րդ հոդվածներում սահմանվում է լիազորված համապատասխան անձանց միջև «սոցիալական տեղեկատվության հավաքագրման և դրանց փոխանակության պարտադիր պայմանը»: Անդրադառնաճառք հատկապես 28-րդ հոդվածին, որը վերաբերում է հաճախորդների իրավունքներին:

«Հաճախորդն իրավունք ունի՝

- 1.** ստանալու տեղեկատվություն իր սոցիալական իրավունքների, դրանց իրացման պայմանների, կարգի և տվյալ սոցիալական խնդիրը լուծելու եղանակների մասին,
- 4.** սոցիալական ծառայության տրամադրման մերժման դեպքում ստանալու գրավոր պատասխան,
- 5.** մասնակցելու սոցիալական ծառայություն ստանալու վերաբերյալ որոշման ընդունման գործընթացին:

2. Տես՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, հոդված 4-րդ:

Պետական կենսաթոշակ՝ հաշմանդամություն ունեցող անձին

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ դուք «հաշմանդամություն ունեցող անձ» կամ «երեխա» ճանաչվելու պահից ստանում եք կենսաթոշակի իրավունք, որից օգտվելու համար հիմքն է ԲՄՓ-ի ձեր հաշմանդամությունը ճանաչելու մասին տեղեկանքը: «Փորձաքննություն» տողում նշված առաջին ամսաթիվը համարվում է հաշմանդամություն սահմանելու օրը³:

Հաշմանդամության կենսաթոշակ նշանակվում է՝

1. աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով՝ անկախ ձեր ապահովագրական ստաժից,
2. ընդհանուր հիվանդության, մանկուց հիվանդության, բնական, տեխնածին և այլ աղետների հետևանքով, եթե հաշմանդամություն սահմանելու ժամանակ դուք ունեցել եք հետևյալ ապահովագրական ստաժը:

Տարիքային խումբը	Ապահովագրական ստաժը
մինչև 23	2 տարի
23 – 26	3 տարի
26 - 30	4 տարի
30 եւ ավելի	5 տարի

Կենսաթոշակը սահմանվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

Հաշմանդամության հիմնական կենսաթոշակի չափը կազմում է՝

1. առաջին խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 140 տոկոսը:
2. երկրորդ խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 120 տոկոսը:
3. երրորդ խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 100 տոկոսը:

3. Տես՝ ՀՀ կառավարության 29 մայիսի 2003 թվականի N 793-Ն որոշումը:

Իսկ եթե դուք չունեք հաշմանդամության ապահովագրական կենսաթոշակի իրավունք, կամ ճանաչվել եք «հաշմանդամություն ունեցող երեխա» նշանակվում է հաշմանդամության սոցիալական կենսաթոշակ, որը սահմանվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:



Հաշմանդամության սոցիալական կենսաթոշակ նշանակվում է՝

1. առաջին խմբի հաշմանդամին և «հաշմանդամ երեխա» ճանաչված անձին՝ հիմնական կենսաթոշակի 140 տոկոսի չափով,
 2. երկրորդ խմբի հաշմանդամին՝ հիմնական կենսաթոշակի 120 տոկոսի չափով,
 3. երրորդ խմբի հաշմանդամին՝ հիմնական կենսաթոշակի 100 տոկոսի չափով:
- **Կենսաթոշակը հատկացվում է պետական բյուջեի միջոցներից և վճարվում ամեն ամիս:** Յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է հաջորդ ամսվա ընթացքում՝ ձեր փաստացի բնակության վայրի, իսկ ձեր ցանկությամբ նաև՝ վճարման ծառայություն մատուցող կազմակերպությունից:
 - **Հաշմանդամության ձեր կարգը փոփոխվելու դեպքում ձեր կենսաթոշակը վերահաշվարկվում է առանց ձեր գրավոր դիմումի՝** հիմք ընդունելով ԲՄՓ-ի ձեր հաշմանդամությունը հավաստող տեղեկանքը: Կենսաթոշակը նոր չափով վճարվում է այդ հանգամանքի առաջացման ամսին հաջորդող ամսվա 1-ից:
 - **Բժշկասոցիալական վերափորձաքննությամբ հաշմանդամ չճանաչվելու դեպքում** կենսաթոշակը վճարվում է մինչև հաշմանդամության ժամկետը լրանալու ամսվա վերջը:
 - **Հաշմանդամության կամ տարիքային կենսաթոշակ նշանակելուց հետո՝** առնվազն վեց ամիս աշխատած լինելու դեպքում, երկու տարին մեկ անգամ դուք իրավունք ունեք դիմել ձեր կենսաթոշակը վերահաշվարկելու հարցով: Վերահաշվարկը կատարվում է դիմումը տալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:
 - **Եթե դուք բաց եք թողել հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը,** սակայն երեք ամսվա ընթացքում ներկայացել եք վերափորձաքննության և ճանաչվել հաշմանդամություն ունե-

ցող անձ, ապա բաց թողնված ժամանակահատվածի համար ձեր կենսաթոշակի վճարումը վերսկսվում է կասեցման օրվանից՝ վճարվելով նախկին հաշմանդամության խմբով հաշվարկված չափով:

- **Ձեր ցանկությամբ ձեր կենսաթոշակը կարող է վճարվել լիազորագրով:** Կենսաթոշակը մեկ լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել 6 ամսից ոչ ավելի՝ սկսած կենսաթոշակ չստացված ամսից: Սակայն կասեցված կամ դադարեցված կենսաթոշակի վճարումը լիազորագրով չի վերսկսվում, բացառությամբ միջպետական համաձայնագրերով նախատեսված դեպքերի: Օրինակ՝ եթե դուք ժամանակավոր բնակության իրավունքով գտնվում եք ԱՊՀ անդամ երկրներում, (բացառությամբ՝ Մերձբալթյան երկրների և Ադրբեջանի) ապա կարող եք օգտվել լիազորագրերի փոխճանաչման իրավունքից:
- **Եթե դուք չեք ստացել ձեր կենսաթոշակը,** ապա անցած ժամանակահատվածի համար գումարները վճարվում են, սակայն ձեր դիմելու ամսվան նախորդող երեք տարուց ոչ ավելի, եթե այդ ընթացքում միաժամանակ պահպանվել է ձեր հաշմանդամությունը:
- **Իսկ եթե ձեր կենսաթոշակը չի վճարվել** կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքով, ապա չվճարված կենսաթոշակը վճարվում է առանց ժամկետի սահմանափակման՝ միանվագ վճարումով:

Կենսաթոշակ վճարելը կասեցնելու, դադարեցնելու և վերսկսելու դեպքերը սահմանվում են «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 60-րդ հոդվածով:

Կենսաթոշակառուի մահվան, ինչպես նաև հաշմանդամության վերափորձաքննության չներկայանալու (ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում) և այդ ընթացքում մահանալու դեպքում, հուղարկավորությունը կատարած անձին հաշմանդամության հիմնական կենսաթոշակի քսանհինգապատիկի չափով վճարվում է թաղման նպաստ: Սակայն տվյալ անձը, հաշմանդամության կենսաթոշակառուի մահվանից հետո վեց ամսվա ընթացքում, այդ նպատակով պետք է իր դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանմանը: Նշված գումարը վճարվում է դիմումը ներկայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Ա.3 Ո՞վ է տեղեկատվություն տնօրինող և տեղեկատվության համար պատասխանատու անձը

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում այդ լիազորությունը վերապահված է «տեղեկատվություն տնօրինողին», որը փնտրվող տեղեկություններն ունեցող, տնօրինող մարմինը, հիմնարկը, կազմակերպությունն է, դրանց պաշտոնատար անձինք:

Կազմակերպությունների թվում են նաև բյուջեներից (պետական և համայնքային) ֆինանսավորվող կամ հանրային նշանակության կազմակերպությունները: Հանրային նշանակության են ապրանքային շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող, նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները⁴:



Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

- 1.** ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը,
- 2.** իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը և պահպանումը,
- 3.** փնտրելու դեպքում՝ ձեզ տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն,
- 4.** սահմանել իր կողմից բանավոր և (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը⁵:

Որպես պարտադիր պայման, սահմանվում է տեղեկատվություն տնօրինող անձի, կազմակերպության գործունեության և տնօրինվող տեղեկատվության մատչելի և հիմնավոր տրամադրման համար պատասխանատու պաշտոնատար անձի նշանակման հարցը:

4. Տես՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 3-րդ հոդվածը:

5. Տես՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 12-րդ հոդվածը:

Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակած պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը, ով օրենսդրությամբ սահմանված կարգով՝

- 1.** ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը,
- 2.** փնտրելու դեպքում՝ ձեզ համար մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը,
- 3.** մշակում է ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները⁶:

Ա.4 Ու՞ր դիմել

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում դուք իրավունք ունեք ծանոթանալ ձեզ վերաբերող տեղեկություններին⁷, ինչպես նաև իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց ներկայացնել դիմումներ կամ առաջարկություններ՝ ձեր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով և ողջամիտ ժամկետում ստանալու պատշաճ պատասխան⁸:

Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման նպատակով ՀՀ վարչապետի 25.02.08 թվականի N 98-Ն որոշումով ստեղծվել է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Ազգային հանձնաժողով, որը բաղկացած է յոթ նախարարությունների և յոթ հաշմանդամների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, կոորդինացվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Չնայած այն հանգամանքին, որ Ազգային հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, դրա գործունեության նպատակը աջակցելն է:

6. Տես՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 13-րդ հոդվածը:

7. Տես՝ ՀՀ Սահմանադրություն, 23-րդ հոդվածը:

8. Տես՝ ՀՀ Սահմանադրություն, 27.1-րդ հոդվածը:

● **Ազգային հանձնաժողովը համարվում է որոշակի տեղեկություն տնօրինող, հետևաբար, դուք կարող եք ստանալ տեղեկություններ՝**

- ա) ձեր հարցերով զբաղվող մարզային և Երեւան քաղաքի հանձնաժողովների գործունեության կարգի մասին,
- բ) ձեր հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանն ուղղված աջակցության միջոցառումների, ընթացքում ծագած խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկություններ մասին,
- գ) պատասխանատու պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների և այդ ոլորտում գործող հասարակական, գիտական և այլ կազմակերպությունների միջև համագործակցության աջակցության միջոցառումների մասին,
- դ) հաշմանդամության իրավիճակի մասին ամենամյա ազգային զեկույցի վերաբերյալ,
- ե) Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարության և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության տարեկան ծրագրի իրականացման վերաբերյալ համապատասխան պետական լիազոր մարմիններ և տեղական ինքնակառավարման մարմիններ ներկայացրած առաջարկությունների վերաբերյալ,
- զ) սոցիալական պաշտպանության տարեկան ծրագրի նախագծի քննարկման ընթացքի և ՀՀ կառավարությանը ներկայացրած եզրակացության վերաբերյալ,
- է) ձեր իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ընթացքի և դրանց արդյունավետ իրականացման վերաբերյալ ներկայացված առաջարկությունների մասին,
- ը) նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ տրված եզրակացությունների վերաբերյալ,
- թ) ձեր իրավունքների խախտման պատճառների ուսումնասիրության և վերլուծության արդյունքների և համապատասխան ոլորտի լիազոր մարմիններ ներկայացրած առաջարկությունների մասին,

ժ) հաշմանդամության առաջացման պատճառների ուսումնասիրության և վերլուծության արդյունքների և դրանց վերաբերյալ առաջարկությունների մասին,

ժա) մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների հաշվետվությունների և դրանց կատարած աշխատանքների մասին:

Սոցիալական ապահովության և կյանքի պատշաճ մակարդակի վերաբերյալ առավել իրազեկված լինելու նպատակով՝ դուք կամ ձեր օրինական ներկայացուցիչները, շահագրգիռ կազմակերպությունները՝ ըստ տեղեկություն տնօրինող մարմինների, կարող եք ստանալ հետևյալ տեղեկությունները.

● **Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնից ստանալ տեղեկություններ՝**

ա) պետական քաղաքականության իրականացման վերաբերյալ,

բ) սոցիալական պաշտպանության տարեկան ծրագրի մասին (տես՝ բաժին Գ-ում),

գ) վերականգնման բազային ծրագրի եւ դրա իրականացման կարգի վերաբերյալ,

դ) բժշկասոցիալական փորձաքննության իրականացման և վերականգնման անհատական ծրագրերը կազմելու վերաբերյալ,

ե) բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների գործունեության կարգերի մասին,

զ) բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչների և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշների վերաբերյալ,

է) սոցիալական ծառայությունների, վերականգնման տեխնիկական միջոցների պետական ստանդարտների, ինչպես նաև ձեր կենսագործունեության միջավայրի մատչելիությունն ապահովող նորմերի և կանոնների մասին,

ը) հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին աջակցության դեպքերի և ձևերի մասին,

թ) հաշմանդամների առանձին խմբերին օրենքով նախատեսված նպատակների և արտոնությունների տրամադրման կարգերի մասին,

ժ) տնային պայմաններում սոցիալական սպասարկման և խնամքի իրականացման կարգի և պայմանների մասին:

● **Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնից նաև ստանալ տեղեկություններ՝**

ա) սոցիալական պաշտպանության մասին օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության արդյունքների մասին,

բ) համապատասխան տարեկան ծրագրի և վերականգնման բազային ծրագրի իրականացման վերաբերյալ,

գ) բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների կազմի և դրանց գործունեության վերաբերյալ,

դ) վերականգնման ոլորտի կազմակերպությունների և շահագրգիռ հասարակական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ,

ե) հաշմանդամության և հաշմանդամների հարցերի վերաբերյալ կատարվող գիտական հետազոտությունների և մեթոդական փաստաթղթերի վերաբերյալ,

զ) հաշմանդամների տվյալների բանկի վարման վերաբերյալ:

● **Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմիններից ստանալ տեղեկություններ՝**

ա) հաշմանդամություն ունեցող տվյալ անձի կենսագործունեության սահմանափակման բնույթի, աստիճանի և վերականգնողական մեթոդի վերաբերյալ,

բ) տվյալ անձին հաշմանդամություն ունեցող ճանաչելու հիմքերի, հաշմանդամության խմբի, հաշմանդամություն ունեցող երեխայի կարգավիճակի, հաշմանդամության պատճառական կապի, ժամկետի և վաղեմության վերաբերյալ,

գ) սոցիալական պաշտպանության միջոցառումների տեսակներից, ձևերից և ծավալներից օգտվելու ձեր կարիքների, անհատական վերականգնողական ծրագրի վերաբերյալ,

դ) բժշկասոցիալական փորձաքննություն անցնող անձանց լրացուցիչ հետազոտություններ անցնելու համար ուղեգիր տալու դեպքերի և պայմանների մասին,

-
- ե)** հաշմանդամություն ունեցող անձի մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանի, ինչպես նաև աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության կամ առողջությանը հասցված այլ վնասի հետևանքով ժամանակավոր անաշխատունակության թերթիկի ժամկետի երկարաձգման հիմքերի մասին,
 - զ)** աշխատանքային խեղումների և մասնագիտական հիվանդությունների դեպքերում՝ գործատուներից ստացված տուժած անձանց աշխատանքի բնույթի և պայմանների վերաբերյալ,
 - է)** արտադրական խեղման, մասնագիտական հիվանդության, ռազմաճակատում գտնվելու, զինվորական ծառայության և այլ հանգամանքների հետ տուժած անձանց մահվան պատճառական կապի մասին,
 - ը)** վերականգնողական միջոցառումների իրականացման մասին,
 - թ)** հաշմանդամության վիճակի և առաջացման պատճառների վերաբերյալ,
 - ժ)** հաշմանդամության կանխարգելման, հաշմանդամների բժշկասոցիալական վերականգնման ծրագրերի մշակման ընթացիկ աշխատանքների մասին,
 - ժա)** բժշկասոցիալական փորձաքննություն անցած անձանց տվյալների բանկի ստեղծման ընթացքին:

Ա.5 Ի՞նչ տեղեկատվություն ստանալ

- Սոցիալական ապահովության և կյանքի պատշաճ մակարդակի վերաբերյալ տեղեկություններ

Յուրաքանչյուր ոք հաշմանդամության դեպքերում ունի սոցիալական ապահովության իրավունք⁹: Եթե դուք ճանաչվել եք հաշմանդամություն ունեցող անձ, ապա հիշեք, որ ձեզ ուղղված վերականգնողական միջոցառումները գոյություն ունեցող բժշկական մոդելից աստիճանաբար անցնում են սոցիալական մոդելին, որի արդյունքում հաշմանդամություն ունեցող անձանց հետ տարվող վերականգնողական բազային կամ անհատական ծրագրերն աստիճանաբար ներառում են սոցիալական միջոցառումներ:



Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի՝ հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական միջոցառումներն իրականացվում են ձեր առողջության, աշխատունակության և սոցիալական կարգավիճակի վերականգնման նպատակով: Վերականգնումը ներառում է բժշկական, մասնագիտական և սոցիալական միջոցառումներ, որոնք ուղղված են ձեր կենսագործունեության սահմանափակման վերացմանը կամ հնարավորինս փոխհատուցմանը:

Բժշկական վերականգնումը վերականգնողական բուժումն է, վերակառուցողական վիրաբուժությունը, պրոթեզաօրթոպեդիկ օգնությունը, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովումը: Բժշկական վերականգնման հետ կապված ձեզ հետաքրքրող տեղեկությունները կամ խորհրդատվությունը դուք կարող եք ստանալ հիվանդանոցային, ամբուլատոր կամ առողջարանային բուժման հաստատություններում:

Մասնագիտական վերականգնումը, ըստ էության, կարելի է համարել սոցիալական, քանի որ ներառում է ձեր կորցրած կամ նվազած մասնագիտական ունակությունների վերականգնումը, մասնագիտության ընտրությունը և աշխատանքի համապատասխան պայմանների ստեղծումը:

Սոցիալական վերականգնումը սոցիալական, սոցիալ-հոգեբանական, մանկավարժական, իրավական և տնտեսական միջոցառումներ:

9. Տես՝ ՀՀ Սահմանադրություն, 37-րդ հոդված:

րի համակարգ է, որն ուղղված է հաշմանդամի համար հասարակական կյանքի բոլոր բնագավառներում մյուս քաղաքացիներին հավասար հնարավորություններ ստեղծելուն:

Անհատական վերականգնողական ծրագիրը

Դուք հասարակության լիարժեք և իրավահավասար անդամ եք, և պետք է հնարավորություն ունենաք ինքնուրույն կողմնորոշվել և անկախ ընտրել ձեր մասնագիտությունը, աշխատանքը, կենսակերպը և այլն: Սակայն դա պետք է անել հիմնավոր և հանգամանալից իրազեկվածության արդյունքում, ինչպես դա կարող է անել յուրաքանչյուր ոք: Իրավասու մարմինները ոչ թե պետք է ձեր փոխարեն որոշում կայացնեն և կանխորոշեն ձեր հետագա կենսակերպը, այլ իրենց մասնագիտական եզրակացությունների միջոցով հանդես գան որպես ուղղորդող և խորհրդատվություն իրականացնող մարմիններ: Այսինքն, դրանք պետք է նպաստեն ձեր անհատական վերականգնողական ծրագրի իրականացմանը:

Ձեզ ուղղված վերականգնման բազային ծրագրում ընդգրկված վերականգնման միջոցառումներն իրականացվում են ՀՀ-ում պետական պատվեր իրականացնող առողջապահության, կրթության և սոցիալական պաշտպանության ոլորտների կազմակերպությունները, որոնք էլ համարվում են այդ ոլորտում տեղեկատվություն տնօրինողներ: Վերականգնման բազային ծրագիրն իրականացվում է վերականգնման անհատական ծրագրով կոնկրետ ձեզ համար նախատեսված միջոցառումների իրագործմամբ և ունի երաշխավորական բնույթ:



Ձեր բժշկասոցիալական վերականգնումն իրականացվում է «ԱՐԹՄԵԴ» բուժվերականգնողական կենտրոնում, «Սթրես-կենտրոն» ՓԲԸ-ում, ինչպես նաև Միջազգային Կարմիր խաչի հետվճարվածքային վերականգնողական, Գյումրու վերականգնողական, Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական կենտրոններում, «Օշական» մանկական վերականգնողական կենտրոնում, «Արարատ» մոր և մանկան կենտրոններում և այլն, որոնք սակայն չեն բավարարում առկա պահանջարկը¹⁰:

10. ՀՀ-ում, 2008թ.-ի ամռան դրությամբ, պաշտոնապես հաշվառված է շուրջ 149 հազար հաշմանդամություն ունեցող անձ, որի 6 %-ը մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաներ են:

Հիշեք՝

առանց ձեր իմացության և գիտակցված համաձայնության չի կարող իրականացվել որևէ վերականգնողական միջոցառում: Ձեր վերջնական որոշման հիման վրա հաստատված վերականգնողական ծրագրերը իրականացվում են հիմնականում անվճար՝ պետական բյուջեի միջոցներից:

● Առողջության և վերականգնման վերաբերյալ տեղեկություններ

Բաշմանդամությունը պայմանավորված է ձեր առողջության խաթարման հետևանքով կենսագործունեության սահմանափակումով, հետևաբար հաշմանդամների համար առողջության և վերականգնման իրավունքը անհրաժեշտություն է իր ամբողջության մեջ:

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ

Բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս դուք (ձեր օրինական ներկայացուցիչը) իրավունք ունեք՝

- մատչելի ձևով ստանալ տեղեկություն ձեր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին,
- տեղյակ լինել ձեր հիվանդության մասին և համաձայնություն տալ բժշկական միջամտության համար, իսկ հրաժարվելու դեպքում փաստը՝ հնարավոր հետևանքների նշումով, գրանցվում է բժշկական փաստաթղթերում և հավաստվում ձեր կամ ձեր օրինական ներկայացուցչի կողմից,
- պահանջել բժշկի օգնությանը դիմելու փաստի, ձեր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում, բացի օրենսդրությամբ սահմանված դեպքերից: Դա բխում է նաև ձեր անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի սկզբունքից¹¹:

11. Տես՝ Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, 5-րդ, 7-րդ և 17-րդ հոդվածներ:

Բուժման նպատակով նոր դեղերի, մեթոդների, ձևերի, միջոցների կիրառումը, ցանկացած կենսաբժշկական հետազոտություն կարող է իրականացվել միայն ձեր (ձեր օրինական ներկայացուցչի) իրազեկված գրավոր համաձայնության դեպքում¹²:

Յիշեք՝

ձեզ ուղղված բժշկական օգնությունը և սպասարկումը հիմնականում իրականացվում է անվճար, տվյալ տարվա համար պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ծառայություններին համապատասան, սակայն դրանից դուրս առանձին վճարովի ծառայությունների տրամադրման դեպքում, իրականացնող անձը պարտավոր է ձեզ կամ ձեր բժշկական օգնության համար այլ վճարողների պահանջով տրամադրել անհրաժեշտ տվյալներ՝ հիվանդին ցուցաբերած բժշկական օգնության և սպասարկման քանակական ու որակական բնութագրիչների և այդ նպատակով կատարված ծախսերի մասին¹³:

● Կրթության ոլորտում իրավահարաբերությունների վերաբերյալ տեղեկություններ

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի ընդունումով Հայաստանում ներդրվեց ներառական կրթության համակարգը, որը նշանակում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց՝ կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով, համատեղ ուսուցումը հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության բնագավառում տեղեկություն տնօրինող ներքոնշյալ մարմիններից կարող եք ստանալ հետևյալ տեղեկությունները¹⁴.

12. Տես՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված:

13. Տես՝ նույն տեղում, 19-րդ հոդված:

14. Տես՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքի 17-ից 20-րդ հոդվածներ:

● **Հայաստանի Հանրապետության կառավարությունից և կրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազոր մարմնից՝**

- ա) համապատասխան հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի, դրանց ստեղծման, վերակազմակերպման և լուծարման կարգի, ինչպես նաև հատուկ կրթության ծրագրերի լիցենզավորման կարգի մասին,
- բ) հանրակրթական և հատուկ պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության մասին,
- գ) պետական հատուկ կրթության չափորոշիչների մշակման, հաստատման և ներդրման կարգի մասին,
- դ) տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների, ինչպես նաև նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության և վարպետային ուսուցման այն մասնագիտությունների ցանկի մասին, որոնք կարող են կազմակերպվել տնային ուսուցման պայմաններում,
- ե) նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության այն մասնագիտությունների ցանկի մասին, որոնց դեպքում պարտադիր չէ առնվազն հիմնական կրթության հիմքը¹⁵,
- զ) երեխաների կրթության ապահովման ֆինանսավորման բարձրացված չափաքանակի վերաբերյալ,
- է) երեխաների կրթությունը կազմակերպող մանկավարժների աշխատանքի վարձատրության արտոնյալ պայմանների հաշվարկման կարգի մասին,
- ը) բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոններին ներկայացվող պահանջների և դրանց ցանկի մասին,
- թ) երեխաների համար առանձին մարզական պարապմունքներ իրականացնելու կարգի մասին:

15. Տես նաև ՀՀ կառավարության 3.08.2006թ., N 1151-Ն որոշումը:

- **Կրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազոր մարմնից, նաև՝**

- ա) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցման պայմանագրի տիպային ձևի վերաբերյալ,
- բ) հանրակրթական և հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընդունելության կարգի մասին,
- գ) ներառական կրթություն իրականացնելու կարգի և դա իրականացնող ուսումնական հաստատությունների ցանկի մասին,
- դ) քաղաքացիների առողջության պահպանմանը, հաշմանդամության կանխարգելմանը, կենսագործունեության սահմանափակումներով անձանց սոցիալական հարմարեցմանն ուղղված համատեղ ծրագրերի ու միջոցառումների մասին, իսկ այդ գործունեության համակարգման, հատուկ կրթության հարցերով տեղեկատվության և փորձի փոխանակման նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու դեպքում՝ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ,
- ե) համապատասխան օգնականի ծառայությունից օգտվելու կարգի մասին:

- **Կրթության բնագավառում պետական կառավարման տարածքային մարմիններից՝**

- ա) մարզի տարածքում երեխաներին ուղղված կրթության քաղաքականության իրականացման մասին,
- բ) դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը համակարգելու, վերահսկելու և ուսումնական հաստատություններում նրանց ընդգրկվածության վերաբերյալ,
- գ) երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը վկայագրելու մասին:

- **Տեղական ինքնակառավարման մարմիններից՝**

- ա) համայնքի տարածքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության պետական քաղաքականության իրականացմանը աջակցության մասին,
- բ) նախադպրոցական և դպրոցական տարիքի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառ-

ման, և նրանց ընդգրկումը ուսումնական հաստատություններում ապահովելու վերաբերյալ:

Կրթական ծրագրերով սահմանված տեղեկությունները ընկալելու և ուսումնառության գործընթացին արդյունավետությամբ մասնակցելու համար անհրաժեշտ է հաշմանդամ-երեխաների անհատական և ընդհանուր կարիքների ճանաչումը, և դրանց գնահատումը՝ բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնների միջոցով¹⁶:

● **Տեղեկատվություն տնօրինող համարվող բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոններից կարող եք ստանալ տեղեկություններ¹⁷**

ա) երեխաների զարգացման առանձնահատկությունների առավել վաղ շրջանում բացահայտման, գնահատման և կրթության համար համարժեք պայմանների ապահովման հիմքերի վերաբերյալ,

բ) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության համար համարժեք պայմանների վերաբերյալ համապատասխան եզրակացության մասին,

գ) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վերաբերյալ ձևավորված տվյալների բազայի և դրանից օգտվելու տարբերակների մասին:



Հիշեք նաև, որ բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնները մատուցում են խորհրդատվություն՝

ա) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողներին (այլ օրինական ներկայացուցիչներին),

բ) մանկավարժության, առողջապահության և սոցիալական ոլորտների աշխատակիցներին՝ երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման և նրանց կամ նրանց ծնողների (այլ օրինական ներկայացուցիչների) իրավունքների վերաբերյալ:

15. ՀՀ կառավարության 2007թ.-ի հուլիսի 6-ի թիվ 621-Ն որոշմամբ ստեղծվել է «Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն»՝ ՊՈԱԿ-ը:

16. Տես՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածները:

Թեև ներառական կրթության հնարավորությունն օրենքով վերապահվում է նաև մասնագիտական կրթության բոլոր աստիճաններին, սակայն դեռևս ոչ մի մասնագիտական ուսումնական հաստատություն բավարար չափով հաշմանդամներին չի ապահովել հավասար պայմաններում կրթություն ստանալու համար անհրաժեշտ առանձնահատուկ պայմանները կամ խելամիտ հարմարությունները: Դրանց «բացակայությունը» առաջ է բերում կրթական գործընթացին մասնակից դառնալու և տեղեկատվությունը մատչելիորեն և ամբողջությամբ ստանալու, յուրացնելու դժվարություններ: Խնդիրն այն է, որ գործող օրենքներով դեռևս ամրագրված է արտոնություններ կամ նպաստներ սահմանելու, և ոչ թե մատչելի միջավայր ապահովելու միջոցով կրթական ծրագրերը մատչելիորեն փոխանցելու և տեղեկացնելու տարբերակը:

● **Մասնագիտական կրթության և զբաղվածության ապահովման վերաբերյալ տեղեկությունների օրենսդրական հիմքերը.**

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-6-րդ մասերում սահմանվում է հետևյալ տեղեկությունների վերաբերյալ հիմքերը՝

- ա) պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվելու առաջնահերթ իրավունքից օգտվելու դեպքերի և պայմանների մասին,
- բ) հաշմանդամություն ունեցող անձանց կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար ուսումնառության համակարգ ընդունվելու դեպքերը, հիմքերը,
- գ) ուսումնառող անձի նկատմամբ հաշմանդամության կարգավիճակի սահմանման կամ դրա դադարեցման հիմքերով ուսումնառության համակարգի (վճարովիից անվճար և հակառակը) փոփոխության դեպքերը:

Թվարկված «ա» և «բ» կետերի վերաբերյալ տեղեկությունները կարելի է ստանալ կառավարությունից, կրթության կամ սոցիալական

ուլորտում պետական լիազորված մարմիններից, ինչպես նաև թվարկված բոլոր կետերի մասին կարելի է մանրամասն և կոնկրետ դեպքերի համար տեղեկանալ համապատասխան պետական բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից:

Հաշմանդանություն ունեցող անձանց վերապատրաստելու կամ վերաորակավորելու նպատակով կազմակերպվող դասընթացների վերաբերյալ տեղեկությունները կարելի է ստանալ Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության «Զբաղվածության ծառայություն» գործակալությանից և դրա մարզային կառույցներից¹⁷, ինչպես նաև՝ վերապատրաստումն իրականացնելու իրավունքը մրցութային կարգով շահած կամ սոցիալական գործընկերության կողմ հանդիսացող կազմակերպություններից:

● Աշխատանքային իրավահարաբերությունների վերաբերյալ տեղեկություններ

Հաշմանդանություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման պետական երաշխիքների իրականացման կարգի ու պայմանների մասին տեղեկություններին կարելի է ծանոթանալ «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքից¹⁸, իսկ մանրամասն տեղեկություններ ստանալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության ծառայություն» գործակալության տարածքային մարմիններից:

Հայաստանում առկա սոցիալ տնտեսական զարգացման ցածր մակարդակի պայմաններում բավականին լուրջ խնդիր է հաշմանդանություն ունեցող անձանց զբաղվածության հարցը: Հաշմանդանների ընդհանուր թվից աշխատունակ տարիքի են (16-63) հաշմանդանների ընդհանուր թվի 58%-ը: Զբաղված հաշմանդանները կազմում են աշխատունակ տարիքի բոլոր հաշմանդանների 12%-ը:

Հաշմանդանություն ունեցող անձանց ձեռնարկատիրական գործու-

17. Տես՝ «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը:

18. Տես նաև՝ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդանների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված:

նեությանը (այդ թվում՝ տնային պայմաններում) նպաստելու նպատակով ոչ բնակելի տարածությունների արտահերթ տրամադրման, ինչպես նաև հունքի ձեռքբերման և արտադրանքի իրացման գործում օժանդակություն ցույց տալու միջոցառումների վերաբերյալ տեղեկություններին կարելի է ծանոթանալ պետական կառավարման տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ակտերից¹⁹:



Մի շարք երաշխիքներ են սահմանված նաև «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ հոդվածներում, համաձայն որոնց՝

- հաշմանդամներին ուղղված մասնագիտական ուսուցումը, աշխատանքային ունակությունների վերականգնումը ներառված է գործազրկությունից պարտադիր սոցիալական ապահովագրության ծրագրերում, եթե դուք ունեք առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ,
- ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար տրամադրվող ֆինանսական աջակցության ծրագրերը կազմում են զբաղվածության աջակցության պետական ծրագրերի պարտադիր բաղադրիչ:

Այսինքն, յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի շրջանակներում նախատեսվում է նպատակային ֆինանսավորում՝ նշված աջակցության ձևերն ապահովելու նպատակով: Հետևաբար, դրանք հրապարակային փաստաթղթեր են, որոնց մասին տեղեկություններ կարող եք ստանալ թե տվյալ տարվա բյուջեի մասին օրենքի, թե Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության ծառայություն» գործակալության տարածքային մարմիններից:

Ի դեպ, «Զբաղվածության ծառայություն» գործակալության մարմինները պարտավոր են աշխատանք փնտրելու ընթացքում օժանդակել ձեզ՝ ընտրելու հարմար աշխատանք, իսկ գործատուներին ապահովել անհրաժեշտ մասնագիտություն և որակավորում ունեցող մասնագետներով, ինչպես նաև՝ տրամադրել ֆինանսական աջակցություն՝ ձեռնարկատիրական գործունեության պետական գրանց-

19. Տես՝ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 20-րդ հոդված:

ման համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը սահմանում է նաև, որ գործատուները զբաղվածության պետական քաղաքականության իրականացմանն աջակցելու նպատակով կարող են տեղեկություններ տալ զբաղվածության պետական ծառայություն՝ իրենց մոտ առկա թափուր աշխատատեղերի, սպասվող կառուցվածքային փոփոխությունների և նոր ստեղծվող աշխատատեղերի մասին:



Աշխատանք փնտրելու ընթացքում դուք իրավունք ունեք անվճար ստանալ՝

- տեղեկատվություն՝ զբաղվածության պետական ծառայությունում գրանցված թափուր աշխատատեղերի վերաբերյալ,
- աշխատանքի ընտրության և տեղավորման հարմար միջնորդություն,
- մասնագիտական ուսուցում, ինչպես նաև՝ աշխատանքային ունակությունների վերականգնման, աշխատանքի տեղավորման և ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու նպատակով ֆինանսական աջակցության:

Հաշմանդանություն ունեցող անձանց աշխատանքի առանձնահատուկ պայմանների անվտանգ և առողջությամբ չվնասող միջավայրի առկայության, ձեր աշխատանքի և հանգստի ժամանակահատվածի, արտոնյալ պայմանների կամ բացառությունների սահմանման, վարձատրության պայմանների մասին տեղեկություններին կարելի է ծանոթանալ ՀՀ աշխատանքային օրենսգրքից և «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդանների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 19-րդ հոդվածից, իսկ կոնկրետ դեպքերի վերաբերյալ մանրամասներին՝ համապատասխան գործատուի ներքին ակտերից, պայմանագրային դրույթներից:

Հիշեք՝

անկախ կազմակերպաիրավական ձևից և սեփականությունից, եթե դուք աշխատում եք որևէ գործատուի մոտ, ապա վերջինս ձեզ համար պետք է ստեղծի աշխատանքի համապատասխան և անհրաժեշտ պայմաններ՝ ըստ ձեր վերականգնման անհատական ծրագրի:

ԴՌՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ

Կոլեկտիվ կամ անհատական աշխատանքային պայմանագրով սահմանվող պայմանները, այդ թվում՝ աշխատանքի վարձատրությունը, աշխատանքային և հանգստի ժամանակի ռեժիմը, տարեկան և լրացուցիչ արձակուրդների տևողությունը չեն կարող վատթարացնել ձեր վիճակը կամ սահմանափակել ձեր իրավունքները այլ աշխատողների համեմատությամբ:

- Եթե ձեզ առաջարկվում է արտաժամյա, ոչ աշխատանքային օրերի կամ գիշերային աշխատանքներ, ապա դուք կարող եք դրանցում ներգրավվել միայն ձեր համաձայնությամբ և, եթե նման աշխատանքները բժշկական եզրակացությամբ ձեզ արգելված չեն:
- Եթե դուք 1-ին և 2-րդ խմբի հաշմանդանություն ունեցող անձ եք, ապա ձեզ համար սահմանվում է աշխատաժամերի կրճատված տևողություն՝ շաբաթական 36 ժամից ոչ ավելի:
- Ձեր պահանջով և վերականգնման անհատական ծրագրերին համապատասխան գործատուն պարտավոր է ձեզ համար սահմանել ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ: Սակայն այդ դեպքում ձեր աշխատանքի վարձատրությունը կատարվում է՝ ելնելով ձեր փաստացի աշխատած աշխատաժամանակից կամ թողարկված արտադրանքի քանակից:
- Աշխատանքի ընդունելիս ձեզ համար փորձաշրջան չի սահմանվում, իսկ աշխատողների թվի կամ հաստիքների կրճատման ժամանակ, աշխատանքի հավասար արտադրողականության և նույն որակավորման դեպքում, դուք օգտվում եք աշխատանքում մնալու առավելությունից:

● **Հասարակական, քաղաքական և մշակութային կյանքին մասնակցության վերաբերյալ տեղեկություններ**

Դուք կարող եք ուղղակիորեն կամ ձեր ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով արդյունավետ և համակողմանիորեն մասնակցել քաղաքական և հասարակական կյանքին՝ քվեարկությամբ մասնակցելու, ընտրված լինելու իրավունքի և դրանց հնարավորության ապահովման միջոցով: Կարևոր է ձեր իրազեկվածության աստիճանը որքանով եք տեղեկացված ընթացող քաղաքական կամ հասարակական իրադարձություններին և որքանով է դա բավարար գիտակցված մասնակցություն ունենալու համար:



Հանրային իրազեկման առաջնային միջոցը զանգվածային լրատվությունն է:

Որքան՞վ է հեռուստատեսությունը նպաստում հասարակական, քաղաքական և մշակութային կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությանը:

ԶԼՍ բնագավառի օրենսդրության շրջանակներում այդ մասին անդրադարձ կա հատկապես «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում: Համաձայն 28-րդ հոդվածի՝



Հանրային հեռուստառադիոընկերությունն իր ծրագրերում պարտավոր է ապահովել խուլուհամր հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը, օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել սուրդոթարգմանությամբ կամ հայերեն լուսագրով:

Ցավոք, կիրառության մեջ, հատկապես Հանրային հեռուստաընկերության դեպքում, հաճախ օգտագործվում է լուսագրերի կամ «վազող տողի» տարբերակը, որը շատ հաճախ չի համապատասխանում եթերից հնչող տեքստի հետ: Այսինքն, ՀԸ-ը ինքն է որոշում, թե որ տեղեկությունը կարող է հետաքրքրել լսողության դժվարություն ունեցող անձին:

Տպագիր մամուլի դեպքում, խնդիր է առաջանում տեսողության դժվարություն ունեցող անձանց համար, հատկապես, երբ «Զանգվածային լրատվության միջոցների մասին» օրենքը այդ հարցի կարգավորման վերաբերյալ դրույթ չի սահմանել: Սակայն տպագիր տեղեկատվության կամ ընդհանրապես փաստաթղթերի հավաքագրման, պահպանման և փոխանցման առումով իրավական դաշտը որոշակի կարգավորում սահմանել է: Համաձայն «Փաստաթղթերի պարտադիր օրինակի մասին» ՀՀ օրենքին, 6-րդ և 8-րդ հոդվածների՝



փաստաթղթի (վավերագրերի) տեսակ է համարվում մաս կույրերի և թույլ տեսողների համար նախատեսված հրատարակությունները, և դրանք ենթական են պարտադիր հատկացման՝ Երևանի մշակույթի տան Բրայլյան գրադարանին: Հետևաբար՝ տեսողության դժվարություն ունեցող անձանց համար մատչելի որոշակի տեղեկատվություն կարելի է ստանալ Բրայլյան գրադարանից:

Փորձենք դիտարկել, նաև, թե որքանով է երկրի քաղաքական կամ հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը մատչելի և հասու ձեզ:

● Ընտրություններ

Երկրի քաղաքական և հասարակական մասնակցություն ենթադրող ամենամասսայական գործընթացը համապետական կամ տեղական ընտրություններն են:

Համաձայն ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007թ.-ի մարտի 14-ի թիվ 47 -Ն որոշման՝ սահմանվել է տեսողության հետ կապված քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող քաղաքացիների՝ քվեարկությանը մասնակցելուն օժանդակելու կարգը:

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ

- Եթե դուք տեսողության հետ կապված խնդրի պատճառով ունեք ընտրողների ցուցակում ինքնուրույն ստորագրելու դժվարություն՝ ապա ձեր խնդրանքով, ձեզ կարող է օգնել այլ քաղաքացի, ով չպետք է լինի հանձնաժողովի անդամ կամ վստահված անձ:
- Եթե դուք չունեք տեսողության հետ կապված քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն, ապա քվեարկությանը մասնակցելուն օժանդակելու նպատակով համապետական ընտրությունների, հանրաքվեի, հնարավորության դեպքում՝ նաև մյուս ընտրությունների ժամանակ պատրաստվում և տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացվում է քվեաթերթիկին համապատասխանող՝ սովորաբար կաղապար (ծևաննուշ) (այսուհետ՝ կաղապար), որում քվեաթերթիկի նշումի համար նախատեսված քառանկյանը համապատասխան տեղում բացված են դատարկ V ձևի անցքեր:
- Հանձնաժողովի քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ տրամադրող անդամը քվեաթերթիկը տեղավորում է քվեաթերթիկին համապատասխանող կաղապարում և քվեարկության ծրարի հետ միասին տրամադրում ձեզ:
- Քվեախցիկի մոտ, ձեր խնդրանքով հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ հանձնաժողովի անդամը, իսկ ձեր ցանկության դեպքում՝ քվեաթերթիկը լրացնելիս ձեզ օգնելու իրավունք ունեցող քաղաքացին, ձեզ համար՝ ըստ հերթականու-

թյան, կարողում է քվեաթերթիկում ընդգրկված թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների վերաբերյալ քվեաթերթիկում նշված տվյալները և հնարավորություն տալիս ձեզ քվեախցիկում գաղտնի լրացնելու քվեաթերթիկը:

- Դուք, իմանալով ձեր նախընտրած թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի հերթական համարը քվեաթերթիկում, շոշափելով գտնում եք կաղապարի համապատասխան դատարկ անցքը և ինքնուրույն V ձևի նշում կատարում քվեաթերթիկում:
- Քվեաթերթիկում V ձևի նշում կատարելուց հետո դուք քվեաթերթիկը հանում եք կաղապարից, ծալում, ինքնուրույն կամ հանձնաժողովի անդամի կամ ձեզ ուղեկցող քաղաքացու օգնությամբ քվեաթերթիկը տեղավորում քվեարկության համապատասխան ծրարում:
- Քվեարկության հետ կապված մնացած գործողությունները ձեր ցանկությամբ կատարում եք ինքնուրույն կամ հանձնաժողովի անդամի կամ ձեզ ուղեկցող քաղաքացու օգնությամբ:

2007թ.-ի ԱԺ ընտրություններում տեսողության դժվարություն ունեցող անձանց ինքնուրույն և գաղտնի քվեարկություն իրականացնելու նպատակով առաջին անգամ ներդրված կաղապարային սովա-րաթղթով քվեաթերթիկի լրացման փորձը զրեթե չկիրառվեց: Պատ-ճառը՝ մի կողմից ընտրատեղանասային հանձնաժողովի անդամնե-րի, մյուս կողմից տեսողության դժվարություն ունեցող անձանց տե-ղեկացվածության պակասը՝ կաղապարի օգտագործման կարգի վե-րաբերյալ, որի մանրամասները արդեն իսկ ձեզ ներկայացվեց վերևում:



Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների կազմակերպման և անցկացման գործընթացների վերաբերյալ տեղեկություն տնօրինող անձ են հա-մարվում՝

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հատկապես՝ ընտրողների պետական ռեգիստրը վարելու, համապետական ընտրություններում թեկնածուների գրանցման, ինչպես նաև ընտրությունների վերջնական արդյունքների ամփոփման փուլերում,
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները, հատ-

կապես՝ ԱԺ մեծամասնական և ՏԻ մարմինների թեկնածուների գրանցման, ընտրատարածքում բոլոր ընտրությունների կազմակերպման և ընտրատարածքում տեղամասերի քվեարկության արդյունքները ամփոփելու, իսկ առկայության դեպքում՝ բողոքների փուլերում,

- Տեղամասային ընտրական հանձնաժողովները, հատկապես՝ բոլոր ընտրությունները անցկացնելու և արդյունքները ընտրատարածքային հանձնաժողով ներկայացնելու փուլերում:

Ցավոք, հաշմանդանություն ունեցող անձանց մասնակցության և քարոզարշավի կամ ընտրությունների նախապատրաստման և անցկացման վերաբերյալ տեղեկությունների տրամադրման առանձնահատուկ կարգ չի սահմանված:

Ավելին, եթե նախկինում տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց մասնակցությունն ապահովելու նպատակով կիրառվում էր քվեատուփը ըստ հասցեների տեղեշարժելու տարբերակը, ապա այժմ «Ընտրական օրենսգիրքը» այդ տարբերակը հնարավոր է դիտարկել միայն ստացիոնար բուժման մեջ գտնվող անձանց համար:

Սակայն, հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքում ամրագրված այն սկզբունքը, որ ՏԻՄ-երը պետք է միջոցներ ձեռնարկեն ընտրողների մուտքը ընտրատեղամաս ապահովելու համար, 2007 թվականին ՀՀ ԱԺ և 2008 թվականին Հանրապետության նախագահական ընտրությունների ժամանակ առանձին տեղական ինքնակառավարման մարմիններ մի քանի ընտրատեղամասերում տեղադրել էին հարթասանդուխքներ: Դա իրականացվել է ԿԸՀ հետ համաձայնության արդյունքում, կամավորության սկզբունքով և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ:

● Մշակութային կյանք

Մշակութային կյանքին մասնակցության և դրանց վերաբերյալ տեղեկություններ ստանալու ձեր իրավունքի ապահովման համար դեռևս իրավական հիմքեր չեն սահմանված: Գործնականում նույնպես դրանց կիրառության դեպքերը խիստ սակավ են: Սակայն հարկ է նշել, որ հաճախ մշակութային կյանքին հաշմանդանություն ունեցող անձանց մասնակցությունը կամ հաղորդակցումը բախվում են դժվարությունների հետ ոչ թե մշակութային հնարավոր դրսևորումների բացակայության, այլ դրանց մասին տեղեկացված չլինելու, դրանց

հասանելիության համար խելամիտ հարմարություններ չլինելու, ինչպես նաև քաղաքաշինական, ճարտարապետական-նախագծային աշխատանքներում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները հաշվի չառնելու պատճառով:

Իր տեսակով յուրօրինակ տեղեկատվության փոխանակման և միջնակութային հաղորդակցման ոլորտ է համարվում զբոսաշրջության բնագավառը: Վերջինս դիտարկվում է թե՛ անձնական, թե՛ մշակութային և թե տնտեսական հարաբերությունների դաշտ, որում կարող եք հայտնվել դուք՝ ինչպես զբոսաշրջիկի, այնպես էլ ծառայություն մատուցողի դերում: Սակայն «Ձբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը հաշմանդամություն ունեցող անձին հետաքրքրող «միակ անհրաժեշտ տեղեկատվությունը» սահմանել է հյուրանոցային ծառայությունները: Համաձայն նշված օրենքի 11-րդ հոդվածի՝ հյուրանոցային ծառայություններ մատուցող անձը պարտավոր է հաճախորդների համար տեսանելի տեղերում տեղադրել հաշմանդամներին ծառայություններ մատուցելու հնարավորությունը հավաստող տեղեկատվություն, որը պետք է տեսանելի լինի նաև դրսից:

Այնուհանդերձ, ձեզ ուղղված միակ տեղեկատվությունը նույնպես հաճախ չի ապահովվում, քանի որ ի սկզբանե չի պահպանվել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենսդրության այն պահանջը, համաձայն որի, ցանկացած նոր կառուցվող քաղաքաշինական օբյեկտ կամ գործող կառույց պետք է համապատասխանեցվի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին այնպես, որ ապահովի նրանց իրավունակությունը: Ի դեպ, նորմի չպահպանումն առաջ է բերում վարչական պատասխանատվություն, հետևաբար դուք կարող եք պահանջել օրենքով սահմանված ցանկացած տեղեկատվություն, իսկ չստանալու դեպքում բողոքարկել վարչական կամ դատական մարմիններին: Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 10-րդ հոդվածի «գ» կետի՝



Հայաստանի Հանրապետության կառավարությունն ապահովում է հաշմանդամների համար բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտներից անարգել օգտվելու՝ օրենքից բխող պահանջների իրականացումը:

Իսկ 16-րդ հոդվածում ամրագրված քաղաքաշինության պետական կարգավորման միջոցը քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգն է, որը սահմանում է հուսալիու-

թյան, շրջակա միջավայրի պահպանության, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ, հաշմանդամների տեղաշարժման մատչելիությունն ապահովող եւ այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշներ, ինչպես նաև՝ նախագծման, իրականացման եւ շահագործման ընթացքում որակի ապահովման պայմաններ՝ օբյեկտին, առանձին շենքին, շինությանը, կոնստրուկցիային կամ շինարարական նյութերին ներկայացվող պահանջներով: Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը պարտադիր է քաղաքաշինական գործունեության սուբյեկտների համար:

Յետևաբար, բնակության վայր ընտրելու, տեղաշարժվելու, այս կամ այն անհրաժեշտ ծառայությունից (առողջապահական, կրթական, մշակութային, քաղաքական և այլն) կամ պարզապես հանրային կյանքին մասնակցելու ցանկություն ունենալու դեպքում, դուք կարող եք նախապես ստանալ տեղեկություններ՝ խելամիտ հարմարությունների կամ հաղորդակցման հնարավորությունների մասին:

● Անձնական անձեռնմխելիության և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկություններ

Չայաստանի Չանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածով սահմանվում է մարդու, նաև՝ հաշմանդամի, անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Այսպես՝ առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:



Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է.



«Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին»:

Հետևաբար, ելնելով զարգացած երկրների փորձից, ազատության զրկման դեպքում դուք պետք է ձեզ համար մատչելի ձևաչափերով տնօրինեք ազատությունից զրկվելու պատճառների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությանը: Իսկ ձեր շահերի պաշտպանության նպատակով պետք է ապահովվի իրավական և այլ հարկ եղած օգնության անարգել մատչելիությունը, ներառյալ՝ ձեզ համար մատչելի և ընկալելի տարբերակով:

Միջազգային իրավական պրակտիկայում և «Հաշմանդամների իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում սահմանվում է, որ առանձին հաշմանդամների համար հասկանալի լեզու համարվում է շարժունների լեզուն, այլ կերպ ասած՝ սուրդո թարգմանչությունը, քանի որ հաշմանդամների սոցիալական խմբի համար լեզուն ներառում է լսողախոսքային և շարժունների լեզուն, որպես մատչելի հաղորդակցության ձև:

Արգելվում է ձեզ ներգրավել բժշկական կամ գիտական փորձերում՝ առանց ձեր ազատ և գիտակցված համաձայնության: ՀՀ քրեական օրենսգրքի 123-127-րդ հոդվածները սահմանում են նշված սահմանափակումները և արգելքները: ՀՀ քրեական օրենսգրքի 134-145-րդ հոդվածները և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը որոշակիորեն սահմանել են բժշկական և այլ հարկադիր միջոցների կիրառման դեպքերի սահմանափակումը:

ԲԱԺԻՆ Բ

Մատչելի տեղեկատվություն «ՏԱ մասին» օրենքի և այլ հարակից օրենքների համաձայն

Բ.1 Ինչպե՞ս դիմել և ի՞նչ ժամկետներում ստա- նալ տեղեկություն

Անհրաժեշտ տեղեկությունները հիմնականում հրապարակվում են՝ տեսանելի, մատչելի վայրերում փակցնելու, զանգվածա-յին լրատվության միջոցներով հայտարարելու, համապատասխան ինտերնետային էջում տեղադրելու, ինչպես նաև դրանց ուղղակիորեն ծանոթանալու, պատճենելու և այլ ձևերով հրապարակային դարձնելու միջոցով: Հետևաբար, շատ հաճախ դուք պարզապես կարող եք հեշտությամբ, արդյունավետությամբ և առանց ժամանակի կորստի ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվությունը՝ իմանալով, թե որ լրագոր մարմինն է այն տնօրինում:

Սակայն ձեր կենսագործունեության սահմանափակման արդյունքում դուք կարող եք նաև ունենալ դժվարություններ՝ տեղեկատվությունը մատչելիորեն ստանալու, ընկալելու կամ օգտագործելու առումով: Այդ դեպքում դուք կարող եք օգտվել ձեր օգնականի կամ ուղեկցողի ծառայությունից: Սակայն պետք է հիշել, որ օրենքով սահմանված յուրաքանչյուր տեղեկություն տնօրինող պետք է ունենա տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ, որը պարտավոր է ապահովել տեղեկատվության մատչելիությունը: Հետևաբար, դուք կարող եք օգտվել նաև տվյալ պատասխանատու անձի ծառայությունից: Կառավարության կողմից համապատասխան կարգերը չսահմանելու հետևանքով, ցավոք, այսօր տվյալ ծառայությունը դեռևս հստակ չի գործում, սակայն դրանք ժամանակավոր են, իսկ օրենքը ձեզ հնարավորություն է տալիս դիմել և պահանջել մատչելի տեղեկատվություն:

Անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար դուք կարող եք նաև դիմել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր հարցումով: Խորհուրդ ենք տալիս հնարավորության և ժամանակի առկայության

դեպքում դիմել գրավոր հարցումով (տես՝ տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը, էջ 49): Այս կերպ, եթե ձեզ հետազայում մերժեն կամ ուշացնեն պատասխանը, դուք մերժումը բողոքարկելու հնարավորություն կունենաք:



Եթե գրավոր հարցումն ուղարկում եք փոստով, ապա խորհուրդ ենք տալիս անպայման հարցումն ուղարկել պատվիրված փոստի միջոցով. փոստային անդորրագիրը ձեզ հնարավորություն կտա հետազայում ապացուցել, որ հարցումն իսկապես ուղարկվել է կոնկրետ մարմնին:

Գրավոր հարցումը կարող եք ուղարկել ինչպես ձեր անունից, այնպես էլ ձեր շահերը ներկայացնող կազմակերպության անունից (համապատասխան տիտղոսաթերթի վրա), քանի որ տեղեկություն ստանալու իրավունք ունեն ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք:

Տեղեկություն ստանալու բանավոր և գրավոր հարցումներ

Տեղեկությունը ստանալու համար նախ պետք է հարցումով դիմել տեղեկատվություն տնօրինողին: Տեղեկություն ստանալու համար կարելի է դիմել և՛ գրավոր, և՛ բանավոր:

● **Բանավոր հարցում**

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի, բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը և ազգանունը, և այն կազմակերպությունը (առկայության դեպքում), որը նա ներկայացնում է: Բանավոր հարցումով դիմելիս նախ պետք է պարզել, տվյալ տեղեկատվությունը տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայությունը, և թե ո՞ր պաշտոնյան է պատասխանատու տվյալ տեղեկությունը տրամադրելու համար: Պարզելուց հետո կարող եք անմիջապես դիմել նրան՝ նշելով, թե ինչ տեսքով կամ կրիչի վրա եք ուզում ստանալ տեղեկությունը՝ տեսնել կամ կարդալ փաստաթուղթը, դրանից քաղվածքներ կատարել, ստանալ դրա պատճենը՝ թղթի, պնակիտի կամ խտասալիկի վրա ամրագրված:



Բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Եթե բանավոր հարցմամբ դիմողը չի հայտնում իր անունը և ազգանունը, և (կամ) բանավոր հարցումը չի համա-

պատասխանում սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ապա տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցմանը: Դիմողի ցանկությամբ բանավոր հարցումին կարող է տրվել նաև գրավոր պատասխան:

● **Գրավոր հարցում**

Ինչպես արդեն նշվեց, ժամանակի և հնարավորության առկայության դեպքում անձը կամ կազմակերպությունը կարող է ներկայացնել նաև գրավոր հարցում, որն առավել պաշտպանված կդարձնի ձեր՝ տեղեկություն ստանալու իրավունքը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով (հոդված 9) սահմանված են գրավոր հարցմանը ներկայացվող պահանջները.



Գրավոր հարցումը պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին, հակառակ դեպքում այն կարող են չքննարկել: Գրավոր հարցման մեջ դիմողը պարտադիր պետք է նշի.

- իր անունը, ազգանունը,
- իր բնակության հասցեն կամ իր ներկայացրած կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը,
- գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի:

Հարցումին ներկայացվող վերը նշված պահանջները չբավարարելու դեպքում հարցումը կարող է վերացվել կամ դրան ընդհանրապես ընթացք չի տրվի: Գրավոր անստորագիր հարցումը ենթակա է ոչնչացման:

Հիշեք՝

բոլոր դեպքերում անձը պարտավոր չէ հիմնավորել հարցումը, թե իրեն ինչո՞ւ է անհրաժեշտ տվյալ տեղեկատվությունը, կամ ինչպես է պատրաստվում օգտագործել այն:

Որպեսզի տեղեկություն ստանալու ձեր հարցումը չմերժվի հարցումին ներկայացվող օրենքի պահանջները չբավարարելու հիմքով խորհուրդ ենք տալիս օգտագործել հարցման հետևյալ օրինակելի նմուշը:

Օրինակելի ձև

Մարմնի, կազմակերպության անվանումը
Տեղեկություններ տրամադրող պաշտոնյայի անուն, ազգանունը
Դիմողի անուն, ազգանուն, հայրանունը
(Բնակության, աշխատանքի կամ ուսման վայրի հասցեն)

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պրն/տկն.....,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 24 հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ _____

մասին:

(հնարավորինս հստակ ձևակերպեք անհրաժեշտ տեղեկությունը)

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը ներժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել ներժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝

անուն, ազգանուն

ստորագրություն, ամսաթիվ

Գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով (թուղթ, դիսկետ, էլեկտրոնային նամակ և այլն): Եթե նյութական կրիչը նշված չէ, և դա անհնար է պարզել տվյալ հարցմանը սույն օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում պատասխանելու համար, ապա գրավոր հարցման պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին (պետական մարմնին) առավել ընդունելի նյութական կրիչով:

Հարցմամբ դիմողն իր ցանկությամբ կարող է տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ ետ վերցնելով իր գրավոր հարցումը:

Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

1. տեղեկությունը կամ դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում. սա ոչ թե նշանակում է, որ ձեզ պետք է պատասխանեն 5 օր անց, այլ մինչ 5 օրը, ներառյալ՝ անհապաղ:
2. Եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում: Սակայն հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում տեղեկություն տնօրինող մարմինը պետք է գրավոր տեղեկացնի դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Հետաձգման մասին պաշտոնական գրությունը պետք է պարունակի.

- հետաձգման պատճառները,
- տեղեկությունը տրամադրելու վերջնաժամկետը:

Քիչք, որ այս ժամկետը չի կարող գերազանցել 30 օրը:

Առանձին տեղեկությունների տրամադրման համար օրենքը սահմանում է տարբեր ժամկետներ: Բոլոր դեպքերում մարմինը չի կարող անպատասխան թողնել ձեր հարցումը: Դա կդիտվի որպես տեղեկատվություն ստանալու իրավունքի ոտնահարում և ենթակա է բողոքարկման:

Կարող է լինել դեպք, երբ դուք հարցումը չեք ուղղել ճիշտ մարմնին, մա չունի պահանջվող տեղեկությունը կամ դրա տրամադրումը իր լիազորությունների շրջանակից դուրս է: «Տեղեկատվության ազա-

տության մասին» ՀՀ օրենքը նշում է, որ այս դեպքում հարցումը ստացած մարմինը պարտավոր է տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, ձեզ գրավոր տեղեկացնել այդ մասին, իսկ հնարավորության դեպքում նաև տրամադրել այդ տեղեկատվությունը տնօրինող մարմնի/կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը:

Եթե տեղեկատվություն տնօրինողն ունի փնտրվող տեղեկատվության միայն մի մասը, ապա նա այն տալիս է դիմողին՝ միաժամանակ հնարավորության դեպքում նշում է այն տեղեկատվություն տնօրինողի գտնվելու վայրը, որտեղ դիմողը կարող է գտնել իր փնտրած տվյալների մյուս մասը:

Բ.2 Վճարովի, թե՞ անվճար

Ձեզ ուղղված և հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվությունը, ընդհանուր առմամբ, տրամադրվում է անվճար, քանի որ հիմնականում այն ենթակա է պարտադիր հրապարակման:



Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ տեղեկության տրամադրման համար վճար չի գանձվում հետևյալ դեպքերում.

1. բանավոր հարցումներին պատասխանելիս,
2. մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս,
3. տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս,
4. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում (այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավուքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը) նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս:

Օրենքի դրույթից պարզ է դառնում, որ եթե պահանջվող տեղեկությունները գերազանցում են 10 տպագիր էջը, ապա տրամադրողը

կարող է գումար պահանջել: Նույնը կարող է կիրառվել նաև նյութական այլ կրիչներով տեղեկությունները պահանջելու դեպքում, օրինակ սկավառակների, դիսկետների և այլնի վրա: Սակայն վճարի չափը չի կարող սահմանվել պաշտոնյայի կողմից կամայականորեն:

Յիշեք՝

տեղեկության տրամադրման համար գանձվող վճարը պետք է ներառի միայն այդ տեղեկության տրամադրման տեխնիկական ծախսերը (պատճենահանում, խսասալիկի արժեք և այլն):

Բ.3 Ո՞ր տեղեկությունն է սահմանափակ կամ գաղտնիք

Ձեր անձնական կյանքի բոլոր բաղադրիչները ենթակա են անձեռնմխելիության և պաշտպանության: Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, բժշկական փաստաթղթերի գաղտնիության իրավունք, կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ:

Առանց ձեր համաձայնության չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել ձեզ վերաբերող տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է նաև ձեզ վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով: Ամեն դեպքում, եթե ձեր մասին ապօրինաբար ձեռք են բերվել տեղեկություններ, ապա դուք իրավունք ունեք դրանք վերացնել, իսկ ոչ հավաստի տեղեկությունները՝ շտկել²⁰:



Բժշկագենետիկական և ընտանիքի պլանավորման նպատակով, ձեր և ձեր զուգընկերոջ (ամուսնու) անցած բժշկական հետազոտության արդյունքները համարվում են բժշկական գաղտնիք և կարող են ձեր համաձայնությամբ հաղորդվել նրան²¹:

20. Տես՝ ԳԳ Սահմանադրություն, 23-րդ հոդվածը:

21. Տես՝ Ընտանեկան օրենսգրքի 12-րդ հոդվածը:



Սոցիալական ծառայություններ տրամադրող մարմնի՝ ձեզ սպասարկող սոցիալական աշխատողը՝

- ձեզանից կարող է պահանջել միայն սոցիալական աջակցության տրամադրման հետ կապ ունեցող տեղեկություններ,
- պարտավոր է պահպանել սոցիալական աջակցության տրամադրման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը²²:

Բ.4 Տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը և մերժման կարգը

Պրակտիկայում հաճախ են պատահում տեղեկատվության տրամադրման ամօրինական մերժումներ: Ընդհանրապես տեղեկատվության հարցումը հիմնավորելու ամօրինական պահանջը շատ տարածված է և արդյունավետ առիթ է ծառայում պաշտոնյաների համար խուսափելու անցանկալի հարցումներին պատասխանելու պարտավորությունից: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է իմանալ, թե մերժման ո՞ր հիմքերն են համարվում օրինական:



«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում հստակ սահմանվում են տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմքերն ու կարգը: Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկության տրամադրումը մերժվում է, եթե այն.

- 1.** պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
- 2.** խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ մամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը,
- 3.** պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,
- 4.** բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),

22. Տես՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, 33-րդ հոդվածը:

4. Խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

Այսպիսով, տեղեկության տրամադրումը կարող է մերժվել, եթե դրա բացահայտումը վնասում է կամ կարող է վնասել վերոնշյալ կենսական շահերից որևէ մեկին:

Չիշեք՝

տեղեկատվությունը կարող է սահմանափակվել միայն վերոնշյալ հիմքերի առկայության դեպքում: Տեղեկատվության տրամադրումը կարող է մերժվել նաև այդ տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարելու դեպքում:

Մերժման կարգը

Տեղեկատվության տրամադրման մերժումը պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին: Այն պետք է պարտադիր պարունակի.

- հարցումը մերժելու իրավական հիմքերը (հղում անելով օրենքով սահմանված այն կոնկրետ բացառությանը, որին առնչվում է պահանջվող տեղեկատվությունը՝ նշելով, թե օրենքի որ դրույթի համապատասխան է մերժվում տվյալ տեղեկության տրամադրումը),
- մերժումը բողոքարկելու ժամկետները և կարգը:

Չիշեք՝

մերժողը պարտավոր է հիմնավորել մերժումը: Հարցման մերժումը պետք է լինի միայն գրավոր, որում պետք է հստակ հիմնավորված լինի մերժումը՝ դիմողին տեղեկացնելով մերժման հիմքերը՝ նշելով, թե օրենքի ո՞ր դրույթի համապատասխան է մերժվում տվյալ տեղեկության տրամադրումը: Մերժումը պետք է տրամադրվի 5-օրյա ժամեկտում:

Թեև օրենքը ոչինչ չի ասում անպատասխան մնացած գրավոր հարցումների մասին, սակայն դա համարվում է տեղեկություն ստանալու

խախտում և պատժվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն:

Երբ տեղեկատվության միայն մի մասը կարող է տրամադրվել, պետական մարմինները պարտավոր են տալ փաստաթղթի պատճենը, որից հանված է հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը, և ոչ թե ընդհանրապես մերժեն տեղեկատվության ստանալու հարցումը:

Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ²³:

23. Տես՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետը:

ԲԱԺԻՆ Գ

Մատչելի տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանու- թյան իրավական երաշխիքները

«Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝



հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկություններ ստանալու ազատությունը ապահովելու նպատակով պետությունը՝ սահմանում և ճանաչում է տեղեկատվությունը մատչելիորեն փոխանցելու միջոցները, կրիչները՝ ըստ հաշմանդամության ձևի առանձնահատկության:

Այսպիսով՝

- շարժունների լեզուն ընդունվում է որպես անձնական շփման, ուսման և թարգմանչական ծառայությունների տրամադրման միջոց,
- տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար երաշխավորվում է Բրայլի համակարգով կատարվող ուսուցման ապահովումը, լսողական միջոցների և խոշոր տառատեսակների մատչելիությունը, ներառյալ՝ ուշ տարիքում տեսողությունը կորցրած անձանց Բրայլի համակարգով լրացուցիչ ուսուցումը,
- մտավոր զարգացման խնդիրներ ունեցող անձանց համար կազմակերպվում է լեզվի մատչելի ըմբռնման ուսուցման համակարգ,
- խոսակցական խանգարումներով անձանց տրամադրվում են հաղորդակցման տեխնիկական միջոցներ:

Գ.1 Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ պարտադիր հրապարակման ենթակա սոցիալական տեղեկությունները

«Հայաստանի Հայաստանում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝



սոցիալական պաշտպանության մարմինները պետք է հավաքագրեն, նշակեն և ըստ անհրաժեշտության տրամադրեն կամ հրապարակեն որոշակի տեղեկատվություն:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 3-րդ հոդվածի դրույթները պարտավորեցնում են տեղեկատվություն տնօրինողին՝ տարին առնվազն մեկ անգամ հրապարակել իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները.

1. հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները,
2. բյուջեն,
3. գրավոր հարցումների ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,
4. հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կոթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
5. աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը,
6. շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
7. հասարակական միջոցառումների ծրագրերը,
8. քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը,
9. աշխատանքների և ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները),
10. տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը,
11. ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամ-

փոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը,

12. սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները,

13. սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:



Տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետ-ալիմ էջի առկայության դեպքում՝ նաև դրանով:

Վերականգնողական օգնություն տրամադրող կազմակերպությունները կարող են գործել թե՛ պետական, թե՛ հասարակական դաշտում: Անկախ նրանց կազմակերպաիրավական ձևից և գերատեսչական ենթակայությունից, դրանք պարտավոր են իրենց կողմից տրամադրվող վերականգնողական ծառայությունների տեսակների և ծավալների մասին տեղեկացնել լիազորված մարմնին, իսկ նրանք էլ՝ ձեռնարկման կամ ուղեգրման դեպքում՝ ձեզ²⁴:

Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող աշխատանքները նույնպես հրապարակային են: Դրանք իրականացվում են համապատասխան Տարեկան ծրագրով սահմանված ժամկետներում և կարգով, որը հաստատում է ԱԺ-ն՝ տարեկան պետական բյուջեի շրջանակում: Տվյալ տարվա կտրվածքով, կարող եք տեղեկանալ՝

- նախատեսված աշխատանքների ծավալներին և իրականացման ժամանակացույցին, դրանց ֆինանսավորման համամասնություններին,
- հաշմանդամության կանխարգելման և հաշմանդամների վերականգնման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներին,
- հաշմանդամների վերականգնման նվազագույն չափորոշիչներին, ուղղություններին և հեռանկարներին,
- հաշմանդամների համար սահմանված արտոնությունների ծավալներին, ձևերին և դրանց տրամադրման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներին,
- հաշմանդամներին տրվող սոցիալական օգնության ձևերին և ծավալներին,

24. Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածը:

- առողջապահական ծառայություններից անվճար օգտվելու և առողջության պահպանման միջոցառումներին,
- հաշմանդամներին հասցեագրված աջակցություն ցուցաբերելու միջոցառումներին, ուղղություններին, ծավալներին և նախատեսվող ծառայություններին, արտոնություններին (այդ թվում՝ անվճար մասնագիտացված բժշկական, արատաբանական և հոգեբանական օգնություն, հաշմանդամների կենսագործունեության համար անհրաժեշտ վերականգնման տեխնիկական միջոցների և այլ օժանդակ պարագաների, հաշմանդամության սայլակների, բոլոր տեսակի պրոթեզային իրերի (բացի թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզներից) անվճար տրամադրմանը),
- հաշմանդամների մասնագիտական ուսուցման, վերաորակավորման, որակավորման և աշխատանքի տեղավորման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներին,
- սոցիալական ենթակառուցվածքի մատչելիության ապահովման պայմանների ստեղծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներին,
- հաշմանդամների հասարակական կազմակերպություններին ցույց տրվող պետական աջակցության ծավալները:

Գ.2 Մատչելի տեղեկատվություն

Տեղեկություն ստանալու և հաղորդակցվելու հնարավորության առաջնային պայմանը, դրա մատչելիության, հասանելիության ապահովումն է:

Որպեսզի դուք կարողանաք, օրինակ՝ պետական մարմնից կամ հանրային ծառայության կազմակերպություններից ստանալ որոշակի տեղեկատվություն, դուք պետք է կարողանաք առնվազն տեղաշարժվել, օգտվել տրանսպորտային միջոցների ծառայությունից, տեղաշարժվել ճանապարհներով, մուտք գործել պետական կամ այլ մարմինների շենքեր կամ բացօդյա տարածքներ, կողմնորոշվելու համար օգտվել փակցված տեղեկություններից, այցելել թատրոն, թանգարան, գրադարան, կինո կամ համերգասրահ, եկեղեցի և այլն: Սակայն առաջին խոչնդոտը տեխնիկական խնդիրն է, իսկ երկրորդը՝ հաղորդակցման դժվարությունը:

Համաձայն ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի՝



«հաղորդակցություն» տերմինը ներառում է լեզուները և տեքստի պատկերումը, Բրեյլի, շոշափողական հաղորդակցության, մեծ տառերով տպագրության, մատչելի մուլտիմեդիայի, ինչպես նաև՝ գրավոր, լսողական, լեզվական, մարդու կողմից ընթերցվող և հաղորդակցության օգնենտատիվ և այլընտրանքային մեթոդներ, միջոցներ ու ձևաչափեր, ներառյալ մատչելի տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաներ: Իսկ «լեզուներ» տերմինը ներառում է խոսակցական և նշանների լեզուն, ինչպես նաև՝ ոչ խոսակցական լեզվի այլ ձևերը:

Տեղեկություն ստանալու իրավունքի իրացման համար անհրաժեշտ խելամիտ հարմարությունները պետք է լինեն անհատականացված և ինտերակտիվ: Առաջին դեպքում դա պետք է ուղղված լինի անհատական ստույգ պահանջումների բավարարմանը, իսկ երկրորդ դեպքում՝ արտացոլի անձի և համապատասխան սուբյեկտի միջև հարաբերությունները: Խելամիտ հարմարությունների և հաղորդակցման հնարավորությունների ապահովումը միջոց է, որով մարդը, անկախ իր կարգավիճակից կարող է ձեռք բերել լիարժեքության զգացում:

Եթե դուք ունեք ինքնուրույն տեղեկություն ստանալու կամ տեղաշարժվելու դժվարություն, ապա խորհուրդ ենք տալիս օգտվել անձնական ուղեկցողների, ընթերցողների և շարժումների լեզվի թարգմանիչների կամ ծառայությունների այլ տեսակներին տիրապետող օգնականների և միջնորդների ծառայություններից, որոնց հաճախ կոչում են տեղեկատվության «ուղեկցորդներ»:

Նշենք, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 97-րդ հոդվածը սահմանում է անձնական բնույթի ծառայություններ մատուցելու մասին աշխատանքային պայմանագրի հնարավորությունը, որը կարող է հիմք հանդիսանալ «օգնականների» և «միջնորդների» պայմանագրային հիմքով գործունեության համար: Ի դեպ, այդ դեպքում կարող եք հանդես գալ նաև դուք:

Գ.3 Ինչպե՞ս և ու՞մ բողոքարկել տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու դեպքում

Տեղեկատվության անօրինական մերժումը, անձի կամ կազմակերպության հարցումն անպատասխան թողնելը, օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ պատասխանելը, ոչ լիարժեք տեղեկատվություն տրամադրելը անձի իրավունքների ապօրինի սահմանափակման են հանգեցնում, ինչը ենթակա է բողոքարկման:



Օրենսդրությամբ սահմանվում է տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության երեք ձև՝

- վերանայում վերադասության կարգով,
- բողոքարկում պետական լիազորված մարմին (մարդու իրավունքների պաշտպանին),
- բողոքարկում դատական կարգով:

Տեղեկություն ստանալու իրավունքի խախտումը կարելի է բողոքարկել խախտումը թույլ տված մարմնի վերադասին: Դուք կարող եք բողոքել՝ մարմնից պահանջելով ներքին կարգով վերանայել մերժումը: Բողոքի հետ կցեք նաև մարմնից ստացած պատասխանմերժումը, որը դուք բողոքարկում եք: Եթե վերադասը ուժի մեջ է թողնում մերժումը, որպես հաջորդ քայլ, կարող եք դիմել Մարդու իրավունքների պաշտպանին կամ ուղղակի դատարան: Ի դեպ, այս մարմիններին կարելի է դիմել նաև առանց վերադասության կարգով բողոքարկելու:

Բողոքարկման երկրորդ փուլը պետական լիազորված անկախ մարմնին դիմելն է: ՀՀ-ում այդ լիազորություններով օժտված է օմբուդսմենը՝ մարդու իրավունքների պաշտպանը, որի լիազորությունների մեջ է նտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձնաց կողմից ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքների քննումը՝ համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի:

Ի դեպ, պաշտպանն ունի միայն խախտումը թույլ տված մարմնին խախտումը վերացնելու մասին առաջարկությամբ կամ միջնորդու-

թյամբ հանդես գալու լիազորություն: Այս առաջարկությունը, սակայն, չունի պարտադիր բնույթ:

Որպես այլընտրանք, բողոքարկման երկրորդ փուլը կարող է իրացվել դատական համակարգի միջոցով: Դատարանի վրա է դրված մարդու իրավունքների պաշտպանության առաքելությունը: Ի դեպ, քանի որ ըստ Սահմանադրության մարդիկ ունեն իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք, հետևաբար դատարան կարող են դիմել առանց պաշտպանության առաջին երկու ձևերին դիմելու:



Վերը նշված բողոքարկման ընթացակարգերից բացի, դուք կարող եք տեղեկություն ստանալու իրավունքի ցանկացած խախտման դեպքում դիմել Ինֆորմացիայի ազատության կենտրոն, որը ձեզ անվճար աջակցություն ցույց կտա:

Գ.4 Պատասխանատվությունը տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու կամ անձնական գաղտնիքը հրապարակելու դեպքերում

- **Պատասխանատվություն տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու համար**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝



Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝



«Հաշմանդամների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ունահարման համար մեղավոր պաշտոնատար անձինք և քաղաքացիները ենթակա են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

● Պատասխանատվություն տեղեկության գաղտնիությունը չպահպանելու դեպքում

ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ, 145-րդ և 146-րդ հոդվածներ.

- Մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելը կամ հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելը կամ հավաքելը կամ պահելը, եթե դրանք նախատեսված չեն օրենքով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

- Առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կողմից անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տեղեկություններ հրապարակելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

- Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները, որոնք անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունե-

ությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

- Քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունն ապօրինի խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Նույն արարքը, որը կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

ԲԱԺԻՆ Դ

Հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության մատչելիության ապահովման միջազգային փորձը և ազգային հեռանկարները

2007 թվականին ՄԱԿ-ի կողմից ընդունվել է «Չռչակագիր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» (61/106.), որի 21-րդ հոդվածը վերաբերում է արտահայտման և կարծիքի ազատությանը, տեղեկատվության մատչելիությանը:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2008 թվականի տարեկան ծրագրի պետք է տարվա ընթացքում ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցվի Կոնվենցիային, քանի որ Հայաստանն իր ստորագրությամբ միացել է փաստաթղթին՝ միաժամանակ պարտավորվելով վավերացնել դա:



«Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցառումներ՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան իրացնել ազատ արտահայտվելու ու կարծիքի ազատության իրենց իրավունքը, ներառյալ տեղեկատվության և գաղափարների փնտրումը, ստացումը և արտահայտումը՝ այլ անձանց հետ հավասարազոր կերպով և իրենց ընտրած հաղորդակցության բոլոր ձևերի օգտագործմամբ՝

ինչպես սահմանված է հռչակագրի Հոդված 2-ում, ներառյալ.

- հաշմանդամություն ունեցող անձանց այնպիսի տեղեկատվության տրամադրումը, որը նախատեսված է հասարակության համար՝ մատչելի ձևաչափերով և տեխնոլոգիաներով, որոնք համապատասխանում են հաշմանդամության տարբեր ձևերին՝ ժամանակին ու առանց ավելորդ ծախսերի
- նշանների լեզվի ընդունումը և օգտագործման դյուրացումը. Բրեյլ, օգմենտատիվ և այլընտրանքային հաղորդակցություն՝ բոլոր այլ մատչելի ձևերով, տարբերակներով և ձևաչափերով՝ ըստ

հաշմանդամություն ունեցող անձանց ընտրության՝ պաշտոնական հաղորդակցության ժամանակ

- հասարակությանը ծառայություններ տրամադրող (ներառյալ ինտերնետի միջոցով) մասնավոր ձեռնարկությունների քաջալերում՝ տեղեկատվության և ծառայությունների մատուցում իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի և օգտագործելի ձևաչափերով
- ՁԼՄ-ների քաջալերում (ներառյալ ինտերնետի միջոցով տեղեկատվություն տրամադրողների)՝ իրենց ծառայությունները մատչելի դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց համար
- նշանների լեզվի օգտագործման ճանաչում և սատարում:

Տեղեկատվության մատչելիության նախապայման կարող է համարվել հաշմանդամություն ունեցող անձանց տվյալների բազայի ձևավորումը և վիճակագրության վարումը: Տվյալների հավաքումը հանձնարարվում է «Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման ստանդարտ կանոնների» 13 կանոնով, որը հնարավորություն է տալիս ձևավորել հաշմանդամների դրությանը համապատասխան գնահատական, ավելի արդյունավետ բավարարել հաշմանդամների պահանջմունքները և դրանք նպատակաուղղել հաշմանդամների շահերն ապահովող ծրագրերի իրականացմանը:



ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2003 թվականի դեկտեմբերի 22-ի 58/132 բանաձևի 8-րդ կետում շոշափվում է վիճակագրության և տվյալների հավաքման հարցը: Միաժամանակ, բոլոր նորմերում հիմնարար նախապայման է անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի հարգումը և անձի մասին հավաքված տեղեկությունների միջոցով անձի նկատմամբ չարաշահումների բացառումը:

Օգտագործված իրավական ակտերի ցանկը

1. ՀՀ Սահմանադրություն
2. Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենք:
3. Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենք:
4. Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք:
5. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին ՀՀ օրենք:
6. Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենք:
7. Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենք:
8. Ջրոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենք:
9. Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին ՀՀ օրենք:
10. Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենք:
11. Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենք
12. Ընտրական օրենսգիրք
13. Ընտանեկան օրենսգիրք
14. Աշխատանքային օրենսգիրք
15. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք
16. Քրեական օրենսգիրք
16. ՄԱԿ-ի «Հռչակագիր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» (61/106.),
17. Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման ստանդարտ կանոններ

Եղե՛ք հետևողական և

- Օգտվե՛ք տեղեկատվության ազատության Ձե՛ր իրավունքից:
- Շարունակե՛ք բարձրացնել ձեր իրազեկվածության մակարդակը՝ հանուն ձեր և ձեր երեխայի առողջության և սոցիալական պաշտպանվածության:
- Օգտվե՛ք ձեր իրավունքներից, եղե՛ք ձեր իրավունքների տերը: